Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

օ ր ա թ ե ր թ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

# Առավոտ

a r a v o t d a i l y

40/4136/ 3 մարտի 2012 շաբաթ

ISSN 1829-2224

Ա

## Որ տեմպի կորուստ չլինի

«Ժառանգությունը» դժվար է դասել խոշոր զանգվածային կուսակցությունների շարքին, որն անտագոռգոռ կարգախոսներով տանում է ժողովրդին դեպի պայծառ ապագա: Բայց կուսակցությունն ունի մի կարեւոր առավելություն, որն իրեն առանձնացնում է այլ քաղաքական ուժերից. այն միշտ քաղաքացիների կողքին է՝ խտրականություն չդնելով՝ նրանք հասարակության կողմից ճանաչված են, թե անհայտ, քաղաքական դաշնակից են, թե մրցակից: Այնտեղ, որտեղ խախտվում են մարդու իրավունքները, այնտեղ, որտեղ մարդիկ բողոքում են դրա դեմ, այդ բոլոր վայրերում կարելի է տեսնել «Ժառանգության» փոքրաթիվ խմբակցության անդամներին: Դուք, թերեւս, կասեք, որ դա ավելի շուտ իրավապաշտպան խմբի, ոչ թե քաղաքական կառույցի գործառույթ է: Տեսականորեն դա իսկապես այդպես է: Բայց այսօր մարդկանց փոքր-ինչ ձանձրացրել է այն, ինչ Հայաստանում կոչվում է «քաղաքականություն», երբ ընդդիմությունը՝ ՀՅԴ-ն, ԱԺՄ-ն, ՍԻՄ-ը եւ այլք, իսկ հիմա՝ ՀԱԿ-ը, արտաբերում է միեւնույն շաբլոն մեղադրանքները արտագաղթի, «թալանչիների» եւ «ժողովրդի արյունը ծծողների» մասին, իսկ իշխանությունը դրան պատասխանում է նույնքան հերթապահ փաստարկներով ու... շարունակում թալանել: «Քաղաքականության» այս ձեւն, իմ կարծիքով, իրեն սպառել է, ծեծված խոսքերը կորցրել են իրենց իմաստը եւ ձեռք են բերել զուտ ծիսական բնույթ:

Ժամանակն է, որ հասարակությունն իր առաջ դնի թեեւ երբեմն փոքր, բայց կոնկրետ եւ իրագործելի նպատակներ: Քաղբանտարկյալների ազատ արձակումը հենց նման մի խնդիր էր՝ փառք ու պատիվ ՀԱԿ-ին, մնացած ուժերին, բոլոր նորմալ քաղաքացիներին. այն հաջողվեց իրագործել: Դրանից հետո ամիսներ շարունակ «անհապաղ հրաժարական» անպտուղ կարգախոսի վրա կողմնակիցների էներգիան սպառելը, իսկ այնուհետեւ հերթական խորհրդարանական եւ նախագահական ընտրություններին պատրաստվելը շախմատային լեզվով կոչվում է «տեմպի կորուստ»: Օրինակ՝ երբ դուք առաջ եք տանում ձեր նավակը կամ թագուհին, իսկ հակառակորդը դրանք «քշում է» զինվորով, դուք ստիպված եք լինում ֆիգուրն առաջվա տեղը դնել, բայց մրցակիցն ավելի նպաստավոր դիրք է ձեռք բերում:

«Ժառանգությունն» իր սահմանափակ հնարավորություններով փորձում է առաջ գնալ «փոքր գործերում»՝ լինեն դրանք բնապահպանական, տնտեսական, իրավական, թե կրթական: Վստահ եմ, օրինակ, որ եթե մեզ հաջողվի կասեցնել կրպակների տեղադրումը Մաշտոցի պողոտայում, դա հասարակությանը ավելի շատ կոգեւորի, քան ամիսներով ամենաբոցաշունչ կարգախոսների վանկարկումը:

Երեկ տեղի ունեցավ «Ժառանգության» համագումարը, որի ընթացքում ամենահետաքրքիր ելույթներից մեկն ունեցավ որեւէ կուսակցության անդամ չհանդիսացող Կարապետ Ռուբինյանը: Նա, մասնավորապես, ասաց, որ շրջադարձային փոփոխությունների հնարավորությունը, կարծես թե, բաց է թողնված, բայց դանդաղ, էվոլյուցիոն զարգացումը նույնպես համառ պայքար է պահանջում: Գուցե նույնիսկ՝ ավելի համառ:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

## Րաֆֆի Հովհաննիսյանի տեղն ու դերը կորոշի «Ժառանգության» խորհուրդը

Երեկ «Ժառանգություն» կուսակցության համագումարից հետո, պատասխանելով «Առավոտի» հարցին, թե՝ հնարավո՞ր է, որ ինքը ԱԺ առաջիկա ընտրություններին մասնակցի նաեւ մեծամասնական ընտրակարգով, կուսակցության առաջնորդ Րաֆֆի Հովհաննիսյանն ասաց. «Հավատացեք, որ կուսակցությունում թե՛ համամասնական, թե՛ մեծամասնական ընտրակարգով մեր մասնակցության վերաբերյալ որեւէ քննարկում, դիտարկում մինչեւ հիմա չի եղել: Հիմա մտնում ենք այդ շրջան, եւ մարտի 18-ին խորհուրդն իր որոշումը կտա»: Այդուհանդերձ, փորձեցինք համառել՝ նկատի ունենալով շրջանառվող շշուկները, ըստ որոնց՝ հնարավոր է, որ Րաֆֆի Հովհաննիսյանն առաջադրվի Արագածոտնի ընտրատարածքներից մեկում՝ Թալինում, որտեղ առաջադրվել էր նաեւ 2007-ին: Ի՞նչ մտադրություններ ունի անձամբ ինքը: «Ինչ որ խորհուրդը որոշի՝ ես պատրաստ եմ: Անգամ պատրաստ եմ ամենաանհավասար պայմաններում պայքարի եւ մասնակցության: Բայց խորհուրդը պետք է որոշի՝ իմ տեղն ու դերը որտեղ է»,- հայտարարեց «Ժառանգություն» կուսակցության ղեկավար Րաֆֆի Հովհաննիսյանը:

Կարդացեք էջ 3:




### ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

#### Առաջին նախագահի հնչեցրած միտքը շահեկան է ՀՀԿ-ի համար

ՀՀԿ խմբակցության ղեկավար Գալուստ Սահակյանը ի պատասխան մեր հարցի՝ կիսո՞ւմ է առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի կողմից հանրահավաքում հնչեցրած այն միտքը, թե առաջիկա խորհրդարանական ընտրությունները կլինեն նախագահական, ասաց. «Լավ կլինի, որ այդպես լինի, դա շահեկան է մեզ համար»: Լրագրողների ակտիվությունից հետո պարոն Սահակյանը իր ոճի մեջ շարունակեց. «Իհարկե, եթե խորհրդարանական ընտրություններում մենք արդյունավետ ելք ունենանք, դա խորապես կնպաստի նաեւ նախագահական ընտրություններին, որովհետեւ, ըստ էության, հանրապետության նախագահը նաեւ Հայաստանի Հանրապետական կուսակցության նախագահն է, այդ առումով շահեկան կլինի մեզ համար»:

Կարդացեք նաեւ՝ էջ 2:

### ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Որտե՞ղ եւ ինչպե՞ս ապահովագրել Ձեր առողջությունը: Սոցիալական փաթեթի բոլոր մանրամասները Ձեզ համար պարզաբանում ենք

# 59-21-21

շուրջօրյա հեռախոսահամարով:

ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ ապահովագրական ընկերություն

### ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

#### Համագումար

Այսօր, ժամը 11.30-ին, Մարզահամերգային համալիրում տեղի կունենա ՕԵԿ-ի համագումարը:

#### Եղանակ

Երեւան -5 +7, Շիրակ -12 +1, Կոտայք -12 +1, Գեղարքունիք -12 +1, Լոռի -10 +6, Տավուշ -5 +12, Արագածոտն լեռներ -12 +1, Արագածոտն նախալեռն. -7 +8, Արարատ -6 +10, Արմավիր -6 +10, Վայոց Ձոր լեռներ -12 +1, Վայոց Ձոր նախալեռն. -6 +10, Սյունիքի հովիտներ -5 +12, Սյունիքի նախալեռներ -8 +7, Արցախ -3 +7

## Ես չէի ուզում՝ ինձ ստիպեցին

«Ժողովուրդը պարտադրեց: Ասացին՝ Հակոբյան, մենք պետք է մանդատ ունենանք. դրա համար ոչ թե խնդրում ենք, այլ պարտադրում ենք»,- aravot.am-ի հետ զրույցում իր վերջնական որոշման մասին հայտարարեց ԱԺ նախկին պատգամավոր Հակոբ Հակոբյանը (Էջմիածին): Նա առաջադրվելու է թիվ 19 ընտրատարածքում, որն ընդգրկում է Էջմիածին քաղաքը եւ հարակից գյուղերը: Հակոբյանն արդեն երկու անգամ այս ընտրատարածքից ընտրվել է մեծամասնական կարգով: Նախորդ ընտրություններում Հակոբյանին ԸԼՀ-ն չգրանցեց՝ պատճառաբանելով, որ կեղծ ստորագրություններ են ներկայացվել: Հակոբյանի մրցակիցը գեներալ Սեյրան Սարոյանն էր, ով էլ ընտրվեց: Հետաքրքիր է, որ Հակոբ Հակոբյանն այդ ժամանակ ՀՀԿ անդամ էր, մինչդեռ ՀՀԿ-ն պաշտոնապես սատարեց հենց Սեյրան Սարոյանին:

Մեր ունեցած տեղեկություններով՝ այսօր Զվարթնոց համայնքում, որտեղ բնակվում է Հակոբյանը, հանդիպում է եղել բնակիչների հետ: Հանդիպումը հանրության տրամադրությունները ճշտելու նպատակ է ունեցել: Մեզ հետ զրույցում Հակոբ Հակոբյանը հաստատեց մեր տեղեկությունը եւ հավելեց, որ հանդիպմանը մասնակցել են նախատեսվածից շատ մարդիկ. «400-ի փոխարեն 600 մարդ էր եկել, տեղ էլ չկար, մի կերպ էին տեղավորվել: Բայց մարդիկ լավ էին տրամադրված, ուզում էին, որ ես առաջադրվեմ»:

Ավելի վաղ «Առավոտի» հետ զրույցում Հակոբյանը հավաստիացրել էր, որ ինքը երբեք չի դիմել «վերեւներից դաբրո» ստանալու, հիմա էլ է ինքնուրույն գործելու:

Ն. ԳՐԻԳՈՐՅԱՆ

# Խորհրդարանակա՞ն, թե՞ նախագահական ընտրություններ

## ԱԺ-ում քննարկում են առաջին նախագահի հայտարարությունը

Հայ ազգային կոնգրեսի առաջնորդ, ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը ՀԱԿ մարտի 1-ի հանրահավաքում հնչեցրած իր խոսքում հայտարարեց, որ առաջիկա խորհրդարանական ընտրություններն իրականում ավելի շատ նախագահական են, քանի որ նախապատրաստում են քաղաքական ուժերին դեպի նախագահական ընտրություններ: Երեկ մենք խորհրդարանական ուժերի մի քանի ներկայացուցիչների հարցրինք՝ համաձա՞յն են արդյոք այս պնդմանը: ՀՅԴ խմբակցության ղեկավար Վահան Հովհաննիսյանը մեր հարցերին պատասխանելով՝ ասաց. «Կարծում եմ՝ մի տեխնիկական երես կա այս հարցի մեջ: Ժամանակին մեզ չլսեցին եւ պառլամենտը չորս տարուց սարքեցին հինգ, որպեսզի միշտ պառլամենտական ընտրությունները մի քանի ամսով նախորդեն նախագահականին: Եթե պառլամենտը չորս տարվա կյանք ունենար, այդ ժամկետի հարաբերականությունն անընդհատ փոփոխության մեջ շատ կհարստացներ մեր քաղաքական կյանքը: Հիմա բնական է՝ եթե պառլամենտական ընտրություններն ընդամենը մի քանի ամսով են առաջ նախագահականից՝ մայիս եւ վաղ գարուն, կամ ձմեռվա վերջ, նույնիսկ մեկ տարի էլ չկա, այս պայմաններում ցանկացած պառլամենտական ընտրություն լրջագույն ազդեցություն է ունենալու նախագահականի վրա, որովհետեւ այդ ընտրությունը ստեղծելու է մի քաղաքական ինստիտուտ, որի ազդեցությունը քաղաքականության վրա հսկայական է: Եվ բնական է, որ խորհրդարանի ազդեցությունը կլինի ի նպաստ կամ ի հակառակ այս կամ այն թեկնածուի: Իսկ ինչ վերաբերում է երեկվա հանրահավաքում այդ անալիզներին, այնտեղ մի շատ հետաքրքիր միտք հնչեց, որ երկրորդ նախագահը խորտակված նավ է, երրորդը՝ խորտակվող... ես կարծում եմ՝ իսկ առաջին նախագահը այն անտանելի բեռն է, որի



Վ. Հովհաննիսյանը գիտի երկու նավերի խորտակման պատճառը:

պատճառով էդ երկու նավերը խորտակվում են կամ խորտակվել են»: Դաշնակցությունը, Վահան Հովհաննիսյանի ներկայացմամբ, նախագահական ընտրություններում հանդես կգա իր սեփական թեկնածուով: Հիշեցնենք, որ 2007-ին այդ թեկնածուն Վահան Հովհաննիսյանն էր:

«Ժառանգություն» խմբակցության քարտուղար Լարիսա Ալավերդյանը «Առավոտի» հետ զրույցում, պատասխանելով նույն հարցին, ասաց. «Անշուշտ, «Ժառանգությունը» ունի իր թեկնածուն, եւ նա այն թեկնածուն է, որին երկու նախորդ նախագահների օրոք ուղղակի անօրինական գործողությունների հետեւանքով դուրս մղեցին այն գործընթացներից, որ տեղի ունեցան: Դա Րաֆֆի Հովհաննիսյանն է՝ ես հիմա հայտնում եմ իմ անձնական կարծիքը. մենք առայժմ նման որոշում չունենք; Ես կարծում եմ՝ Րաֆֆի Հովհաննիսյանն այն եզակի քաղաքական գործիչներից է ,որի տեսակից, լավ կլիներ, մենք ունենայինք մի 10-12-ը, որպեսզի կարողանայինք այդ տեսակի մեջ ընտրություն կատաել: Ցավոք, այդպես չէ: Հիմա այն մասին, թե ինչ է ասել պարոն առաջին նախագահը: Ես, ճիշտն ասած, սիրում եմ ժամանակագրության առումով մնալ այն նպատակների մեջ, որոնք դրված են այսօր, դա նաեւ Աստվածաշնչյան ճշմարտություն է, որում ասվում է՝ Աստծուց առաջ մի ընկեք, այսօրվա հոգսը բավական է օրվա համար: Ես կարծում եմ, բացի այս խոսքից, մնում է եւս մեկը՝ չի կարելի նսեմացնել խորհրդարանական ընտրությունների առանձնահատուկ դերը: Ես այդտեղ եմ տեսնում այն նույն գիծը, որը քաղաքական ուժերի կողմից որդեգրվել է ժամանակին՝ դեռ 90-ականներից, երբ որպես խորհրդարանական հանրապետություն իր ճանապարհն սկսած մեր երկիրը մեկ-երկու տարուց հետո իր ուղին փոխեց՝ դարձնելով նախագահական: Փորձը ցույց տվեց, որ անգամ կիսանախագահականը որեւէ բան չփոխեց, այսինքն՝ ամեն մեկս պետք է հասկանանք, որ դեմ ենք գնում մեր հոգեկերտվածքին, իսկ մեր հոգեկերտվածքն այն է, որ բոլորը ուզում են լսելի լինել, համոզված են, որ ունեն ուժ եւ կարողություն՝ քաղաքական որոշումներին մասնակցելու»: Ըստ Լարիսա Ալավերդյանի՝ իշխանությունները ուզում են մոլորեցնել ժողովրդին, որ իբր մրցակցություն կա իշխանական ուժերի միջեւ. «Խնդիր են դրել, այսպես կոչված, իշխանական մրցակցությունով քողարկել իրական մրցակցությունը, եւ ահա, բոլոր այդ ուժերի ետեւում կանգնած են երեք նախագահները: Պատահական չէ, որ իրենք այս ընտրությունները համարում են նախա-նախագահական»:

«Բարգավաճ Հայաստան» խմբակցության անդամ, ԱԺ փոխնախագահ Սամվել Բալասանյանը պատասխանելով «Առավոտի» հարցին՝ համաձա՞յն են առաջին նախագահի մտքին, թե խորհրդարանական ընտրությունները նախագահական են ինչ-որ առումով, ասաց. «Ճիշտն ասած, եթե ուսումնասիրում ենք 2005-ին մեր կողմից ընդունված Սահմանադրությունը, որում ստեղծեցինք զսպման եւ հավասարակշռման մեխանիզմներ՝ կապված Ազգային ժողովի եւ նախագահի լիազորությունների հետ, ապա կարելի է համարել, որ դա պլատֆորմ է, որտեղից ակնհայտ կդառնան նաեւ հետագայում նախագահի թեկնածուների հետ կապված առաջադրումները: Որովհետեւ ԱԺ-ում ձեւավորելով համապատասխան խճանկար՝ ըստ ժողովրդի տված վստահության քվեի, առանց մեծամասնության նախագահը հետագայում դժվար կաշխատի, եթե ընտրվի ինչ-որ փոքրամասնությամբ. այդպիսի բան չի կարող լինել: Դա համաշխարհային փորձ է, եւ մեր Սահմանադրությունը նույնպես այդպիսի համապատասխան դրույթներ ունեցավ 2005-ին ընդունված փոփոխություններով»:

ՄԱՐԳԱՐԻՏ ԵՍԱՅԱՆ

# Նորարարական մոտեցումներ

## ՀՀ-ԵՄ 2012-2013թթ. համագործակցության ծրագրում

Երեկ ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանը լրագրողներին է ներկայացրել Ազգային անվտանգության խորհրդի՝ նախօրեին տեղի ունեցած նիստի ընթացքում քննարկված եւ հավանության արժանացած երկու կարեւորագույն փաստաթղթերը՝ ՀՀ-ԵՄ 2012-2013թթ. համագործակցության ծրագիրը եւ ահաբեկչության դեմ պայքարի ազգային ռազմավարությունը:

ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանն ասել է. «ՀՀ-ԵՄ քաղաքական համագործակցությունը արդյունավետորեն զարգանում է: Որպես ԵՄ կառույցների հետ ՀՀ համագործակցությունը համակարգող պետական հանձնաժողովի նախագահ՝ ուզում եմ նշել, որ մեր համագործակցությունը ԵՄ-ի հետ ձեռք է բերում որակական եւ բովանդակային նոր նշանակություն: Մեր երկիրը նախապատրաստվում է ԵՄ-ի հետ քաղաքական ասոցացման պայմանագրի ստորագրմանը, որը, ենթադրաբար, տեղի կունենա 2013թ. ավարտին: ՀՀ-ԵՄ 2012-2013 համագործակցության ծրագիրը 2 տարվա համար նախատեսված գործողությունների ծրագիր է, որը ներառում է 6 հիմնական խմբերի բաժանվող կոնկրետ 168 միջոցառում, որոնք ավելի են խթանելու ԵՄ-Հայաստան համագործակցությունը»:

Արթուր Բաղդասարյանն առանձնացրել է ծրագրում ներառված այն գործողությունները եւ միջոցառումները, որոնցում տեղ են գտել բավականին նորարարական մոտեցումներ: Մասնավորապես, լուրջ բարեփոխումներ են նախատեսվում քրեակատարողական հաստատությունների ոլորտում: Հայաստանում կներդրվի պրոբացիոն ծառայության համակարգ եւ կմշակվի այլընտրանքային պատիժների իրականացման ռազմավարությունը: Պրոբացիոն՝ վարչական հսկողության ծառայությունը թույլ է տալիս, որ նվազ հասարակական վտանգավորություն ներկայացնող հանցանքների համար մարդիկ ոչ թե հայտնվեն ուղղիչ աշխատանքային հաստատություններում, այլ վարչական խիստ հսկողության ներքո՝ մարդու տեղաշարժը հսկողության տակ պահելու՝ ժամանակակից տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունների շնորհիվ: «Շատ կարեւոր նորարարություն է, որը հնարավորություն կտա, որ նվազ հանցագործություններ կատարած անձինք ոչ թե զրկվեն իրենց ընտանիքից եւ ազատությունից, այլ պետության կողմից արդյունավետ եւ խիստ վարչական հսկողություն իրականացնելու պայմաններում իրենց պատիժը կրեն ազատության մեջ»,- ընդգծել է ԱԱԽ քարտուղարը:

Խոսելով դյուրացված վիզային ռեժիմի ընդունման գործընթացի մասին՝ Արթուր Բաղդասարյանը նշել է, որ այն հնարավորություն կտա տարբեր սոցիալական խմբերի առավել պարզեցված ընթացակարգերով՝ առանց ավելորդ քաշքշուկների անարգել մուտք գործել ԵՄ տարածք: «Մեր երկրում մեկնարկում է խորը եւ համապարփակ ազատ առեւտրի համաձայնագրի ստորագրման գործընթացը, որը նշանակում է տնտեսական համագործակցության բոլորովին նոր մակարդակ: ԵՄ-ն Արեւելյան Գործընկերության անդամ երկրներին առաջարկում է GSP+՝ ընդհանրացված արտոնությունների համակարգը, որը հնարավորություն կտա հայկական ապրանք արտադրողներին, մեր ձեռնարկություններին առանց բյուրոկրատական քաշքշուկների եւ նաեւ շատ դեպքերում առանց մաքսային վճարների ներթափանցել մի քանի հարյուր միլիոն բնակչություն ունեցող ԵՄ շուկա, ինչը չափազանց կարեւոր է Հայաստանի համար՝ ԵՄ-ի հետ մեր հարաբերությունների դիվերսիֆիկացման եւ ազատ առեւտրի խթանման առումով»,- ասել է նա:



Արթուր Բաղդասարյանն անդրադարձել է նաեւ մարդու իրավունքների պաշտպանության եւ ժողովրդավարական բարեփոխումների ոլորտին: «Հայաստանում այս տարվա ընթացքում կհաստատվի մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը, որը հնարավորություն կտա մարդու իրավունքների պաշտպանության մակարդակը Հայաստանում էականորեն բարելավել: Այս աշխատանքում ներգրավված են ԵՄ փորձագետները, եւ այս փաստաթղթի մշակումը եւ ընդունումը հնարավորություն է տալու մեզ տարբեր մակարդակներում ՀՀ-ում մարդու իրավունքների պաշտպանության եւ օրենքի գերակայության խնդիրները դնել բոլորովին նոր հարթության վրա: Խոսքը վերաբերում է ոչ միայն դատական իշխանության համակարգում տեղի ունեցող բարեփոխումներին, այլեւ ընդհանրապես մարդու իրավունքների իրացման հետ կապված բոլոր հնարավոր բյուրոկրատական քաշքշուկների զրոյացմանը կամ նվազագույնին հասցնելուն»,- ասել է Արթուր Բաղդասարյանը:

Արթուր Բաղդասարյանն անդրադարձել է նաեւ ԵՄ լավագույն փորձի հաշվառմամբ մշակված քայքայիչ աղանդների դեմ պայքարի ռազմավարությանը՝ շեշտելով, որ խոսքը չի վերաբերում կրոնական ազատությանը կամ ազատ դավանանքին, այլ այն աղանդավորական շարժումներին, որոնք իրենց քայքայիչ գործունեությամբ վտանգ են ներկայացնում եւ ռեալ սպառնալիք են Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության համար:

Անդրադառնալով քննարկված երկրորդ կարեւորագույն փաստաթղթին՝ ահաբեկչության եւ կիբեր ահաբեկչության դեմ պայքարի ռազմավարությանը՝ ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանն ասել է. «Ահաբեկչությունը մեծագույն սպառնալիք է ամբողջ աշխարհի համար, եւ Հայաստանը նույնպես բացառություն չէ: Մենք մեր երկրում ունենք վտանգավոր օբյեկտներ՝ ատոմակայան, տարբեր ռազմավարական նշանակության պետական այլ կարեւորագույն օբյեկտներ եւ պետք է պատրաստ լինենք իրադարձությունների զարգացման ցանկացած սցենարի դեպքում: Հայաստանի Հանրապետության ահաբեկչության եւ կիբեր ահաբեկչության դեմ պայքարի ռազմավարությունը ենթադրում է առկա բոլոր վտանգների վերլուծություն, ահաբեկչական հնարավոր գործողությունների ժամանակ անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումների իրականացում եւ նման քայլերի դեպքում հակազդման արդյունավետ գործիքների կիրառում»:

Առավոտ
a r a v o t d a i l y
ՇԱԲԱԹ 03.03.2012

# «Միասին դեռ սարեր ենք շարժելու»

**Երեկ «Ժառանգություն» կուսակցության համագումարում հայտարարեց կուսակցության առաջնորդ Րաֆֆի Հովհաննիսյանը:**

Երեկ ՀՀ կառավարության նիստերի դահլիճում գումարվեց «Ժառանգություն» կուսակցության 7-րդ համագումարը: Ու թեեւ դրան հրավիրված էին հայաստանյան քաղաքական դաշտը ներկայացնող բոլոր ուժերը, այդուհանդերձ, նրանցից ոչ բոլորն էին բարեհաճել ներկա գտնվել համագումարին: Չկային ո՛չ ՀՀԿ ներկայացուցիչներ եւ ո՛չ էլ ՀՅԴ-ականներ: ՀԱԿ-ից համագումարին ներկա էին առանձին կուսակցությունների առաջնորդներ՝ ի դեմս Արամ Սարգսյանի, Ստեփան Դեմիրճյանի, Պետրոս Մակեյանի:

Համագումարի բացման խոսքով հանդես եկավ կուսակցության վարչության փոխնախագահ Ռուբեն Հակոբյանը, որին հաջորդեցին հրավիրված կուսակցությունների ներկայացուցիչների ողջույնի ելույթները՝ ՀՅԴ-ից՝ Վահան Հովհաննիսյանի, «Ազատ դեմոկրատներից»՝ Խաչատուր Քոքոբելյանի նաեւ ՀՀ ԱԺ նախկին փոխնախագահ Կարապետ Ռուբինյանի ու նախկին պատգամավոր Աղասի Արշակյանի եւ այլոց:

Համագումարում, ինչպես եւ ակնկալվում էր, ծավալուն ելույթով հանդես եկավ կուսակցության առաջնորդ Րաֆֆի Հովհաննիսյանը: Նա երկրում առկա վիճակի համար մեղավոր համարեց բոլորին՝ իշխանությանը, քաղաքական ուժերին ու նաեւ հասարակությանը, որովհետեւ, նրա ասելով, հասարակության եւ պետական շահին համապատասխան միասնական օրակարգ երկրում առկա չէ:

Բանախոսը հատկապես կարեւորեց եւ փորձեց ըստ արժանվույն գնահատել Հայաստանում ծայր առած քաղաքացիական՝ բնապահպանական, հայոց լեզվի անաղարտության պահպանման եւ օտարալեզու դպրոցների դեմ հանդես եկող, բանակին զինվոր տված եւ այսօր որդեկորույս մայրերի բողոքի շարժումները, որոնք նա գնահատեց որպես հանուն արդարության պայքար: «Սրանք անհրաժեշտ է զարգացնել, ո՛չ երբեք կուսակցականացնել, բայց նաեւ կուսակցություններին լծել միեւնույն աշխատանքին: Համակարգված, միահամուռ հասարակական շարժումը, ի վերջո, կբերի Հայաստանի ժողովրդավարացմանը»,- հայտարարեց Րաֆֆի Հովհաննիսյանը՝ հավելելով, որ Հայաստանի 20-ամյա կուսակցապետությունն էլ, ի վերջո,




պետք է վերափոխվի սահմանադրական պահանջ հանդիսացող Հայաստանի Հանրապետության, որտեղ կառավարիչները հաշվետու են հասարակության առաջ:

Նա անհրաժեշտ համարեց, որ պետական պաշտոնյան «մի քիչ զուսպ լինի եւ պարի հասարակ ժողովրդի պես, մինչեւ որ հասարակության անդամները կարողանան ոտքի կանգնել եւ մի քիչ մարդավայել ապրել: Հետո թող հարստանան, մենք էլ ուրախանանք»: Նաեւ անհրաժեշտ համարեց, որ Հայաստանի նոր իշխանությունը, «որը գալու է եւ գալու է ուժեղ եւ ամբողջական ձեւով, չի պահպանելու միայն մի կուսակցությունը, որն իրեն շփոթում կամ նույնացնում է պետական օրենքի, զինանշանի եւ պետական սեփականության հետ»: «Անպայման չէ, որ ՀՀ կառավարությունը ոչ թափանցիկ որոշումների, վճիռների միջոցով միայն յուրայիններին տա առավելությունը՝ մոռանալով շարքային քաղաքացիների, նորմալ հայ մարդու հոգսերը»,- ասաց Րաֆֆի Հովհաննիսյանը: Նա խոսեց նաեւ աննպատակային օգտագործվող վարկերի մասին, որոնք շուտով կհատեն նաեւ վտանգավոր շեմը, եւ որոնք պետական պարտքի տեսքով ծանրացել են քաղաքացիների ուսերին:

«Ժառանգության» առաջնորդն ասաց, թե երկրում առկա վիճակը հրամայական է դարձնում իշխանափոխությունը: «Այսինքն՝ քաղաքական ուժերի եւ քաղաքացիական հասարակության համադրման միջոցով պետք է ոչ միայն ձեւավորվի իշխանափոխության նպատակ, այլեւ պետք է համակարգի որակը փոխվի»,- ասաց Րաֆֆի Հովհաննիսյանը:

Նա խոսեց նաեւ ընտրությունների ու մասնավորապես ընտրական համակարգի մասին՝ նկատելով, թե զարգացած ժողովրդավարության համար մեծամասնական ընտրակարգը, որի դեմ հանդես են գալիս հայաստանյան ընդդիմադիր ուժերը, գուցե արդարացված է: Բայց ներկայիս Հայաստանում, նրա ձեւակերպմամբ՝ «հենց իշխանությունների խոստովանությամբ, դա եղանակ է ստրկատիրական, ֆեոդալական կարգեր իրացնելու համար եւ ընտրական փուլ մտնելու՝ 41-ը 0-ի դեմ առավելությամբ»:

«Ժառանգության» հիմնադիր Րաֆֆի Հովհաննիսյանը հակադարձեց իշխանությունների այն պնդմանը, թե՝ 100 տոկոսանոց համամասնական համակարգը հակասում է մեր երկրի Սահմանադրությանը: «Այսպես ասող իշխանությունը թող մի հատ մտածի, թե այսօր քանի՞ հարյուր հազար ՀՀ քաղաքացիներ զրկված են իրենց իրավունքից՝ պետության ընտրություններին մասնակցելու հնարավորությունից»,- նկատեց Հովհաննիսյանը՝ նկատի ունենալով նոր Ընտրական օրենսգրքով սահմանված այն դրույթը, ըստ որի՝ Հայաստանից դուրս գտնվող ՀՀ քաղաքացիները իրավունք չեն ունենալու համապետական ընտրությունների ժամանակ քվեարկել, իսկ ահա օտար երկրներում գտնվող մեր դիվանագետները կարող են քվեարկել էլեկտրոնային փոստով: «Մարդը կամ քաղաքացի է, կամ քաղաքացի չէ, իսկ ի՞նչ է նշանակում եւ ինչպիսի՞ արհամարհանք է սեփական Սահմանադրության եւ ինքնիշխանության հանդեպ, երբ օտար երկրներում գտնվող քաղաքացին չի կարող իրացնել իր իրավունքը, այցելել ՀՀ դեսպանատուն, որը ՀՀ ինքնիշխան տարածքն է, եւ քվեարկել այնտեղ: Ո՞վ է խոսում մեր հակասահմանադրական նախաձեռնության կամ սահմանափակումների մասին: Սա ի՞նչ խտրականություն է: Մենք բոլորս գիտենք, թե այդ հարյուր հազարավոր չքվեարկողների քվեները ինչի համար են օգտագործվելու հետո»,- հայտարարեց Րաֆֆի Հովհաննիսյանը:

Նա անդրադարձավ նաեւ արտաքին քաղաքականության առնչվող խնդիրներին, մասնավորապես՝ հայ-թուրքական հարաբերություններին, բայց ամենաուշագրավը նրա ելույթի՝ ԼՂ-ին վերաբերող հատվածն էր: Նա հայտարարեց, թե Մադրիդյան սկզբունքները կուսակցության համար անընդունելի են, եւ ՀՀ-ն պետք է սկսի շարժվել որպես ինքնիշխան, ազգային պետական կառույց: «Բայց առաջին հերթին Արցախն ինքը պետք է որոշի, թե ինքն ինչ է ուզում: Արձանագրելով, որ անկախության հանրաքվեն Արցախի ժողովրդի կայացրած վճռի արդյունքն էր, որն արվեց միջազգային նորմերի սահմաններում, հաղթեց նախահարձակ Ադրբեջանին, բայց հիմա ինքը պետք է որոշի, թե ինչ է ուզում: Արդյոք արցախյան հարցը միայն ցատկահարթա՞կ է, որ Ստեփանակերտի ազգընտիր ղեկավարները գան Երեւան, արժանանան Երեւանին: Որովհետեւ եթե այդպես է, եթե Արցախը ինքը իրեն չի պաշտպանում իր էությամբ, իր դիվանագիտական զինանոցով մարտադաշտում վաստակած հաղթանակը, եթե ինքը, միայն ինքը միջնորդ է ավելի մեծ տեղեր հասնելու համար՝ թող հիմա որոշի, որ ինքը Հայաստանի մարզ է, ինչպես շատերը մտածում են, եւ թող Արցախի բոլոր քաղաքացիները ընտրեն եւ ընտրվեն Հայաստանի Հանրապետությունում եւ ոչ թե նրանցից միայն մի քանիսը: Թող որոշի, բայց ես՝ որպես նախկին արտգործնախարար, ինչպես մյուս նախարարները, տարբեր շեշտադրումներով միշտ էլ ասել ենք, որ Արցախն արժանի է ճանաչման՝ իր անկախությամբ եւ ամբողջականությամբ, բայց Արցախն ինքը պետք է որոշի այդ հարցը»,- հայտարարեց Րաֆֆի Հովհաննիսյանը:

Վերջինս իր ելույթն ավարտեց նրանով, որ ողջունեց նաեւ իր գլխավորած կուսակցության համագործակցությունը «Ազատ դեմոկրատներ» կուսակցության հետ եւ հույս հայտնեց, որ այդ համագործակցությունը երկարատեւ եւ կայուն հեռանկար կունենա, նաեւ ըստ արժանվույն գնահատեց համագործակցությունը ՀՅԴ-ի հետ: Նա ակնարկեց, թե ընդհանուր եզրեր կան նաեւ արտախորհրդարանական ընդդիմության, այդ թվում՝ նաեւ ՀԱԿ-ի հետ համագործակցելու համար: Իր ելույթը Րաֆֆի Հովհաննիսյանն ավարտեց նրանով, որ հայտարարեց, թե՝ «մենք միասին սարեր ենք շարժելու, քանի որ սա մեր հայրենիքն է»:

Համագումարն ընդունեց նաեւ բանաձեւ, որը կարող եք կարդալ Aravot.am կայքում՝ (http://www.aravot.am/2012/03/02/44571/):

ՆԱԻՐԱ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

# Կառավարություն-«Ժառանգություն»

**Փողոցային ու հանպատրաստից հանդիպում**



Երեկ Կառավարության նիստերի դահլիճում տեղի էր ունենում «Ժառանգություն» կուսակցության 7-րդ համագումարը: Առաջին նիստի ընդմիջումից հետո, երբ կուսակցության պատգամավորներն ու համագումարի մյուս մասնակիցները դուրս եկան Մելիք-Ադամյան փողոց, որտեղ հենց կառավարության նիստերի դահլիճին դեմ-դիմաց գտնվում է ՀՀԿ գրասենյակը, տեսան ՀՀԿ-ի դրոշով եւ «Հայաստանի Հանրապետական կուսակցություն» գրառմամբ զարդարված՝ կայանված սպիտակ մի ավտոբուս: Պարզվեց՝ կառավարության անդամները՝ վարչապետ Տիգրան Սարգսյանի գլխավորությամբ, մեկնում էին Սյունիքի մարզ: Մինչ այս նրանք արդեն հասցրել էին լինել Արագածոտնի եւ Տավուշի մարզերում եւ հանդիպել այդ մարզերի բնակիչների հետ, ՀՀԿ-ականների ասելով՝ ներկայացնելու համար կառավարության անցած 4 տարիների արածն ու նաեւ առաջիկա ծրագրերը, ինչն առանց «դիվանագիտական», այլեւայլ ձեւակերպումների՝ այլ կերպ կոչվում է քարոզարշավ:

Բնականաբար, հենց փողոցի կենտրոնում, որն արդեն խցանվել էր այնտեղ կայանված մեծ թվով մեքենաների եւ ավտոբուսի պատճառով, տեղի ունեցավ վարչապետ-կառավարության անդամներ-ժառանգականներ՝ Արմեն Մարտիրոսյան, Ստեփան Սաֆարյան եւ Անահիտ Բախշյան, հանպատրաստից հանդիպում, որն անցավ անհամեմատ ավելի ջերմ մթնոլորտում, քան այն հանդիպումները, որոնք ԱԺ նիստերի դահլիճում են լինում: «Ժառանգության» պատգամավորներն, իհարկե, պահը չէին կորցրել՝ հարցնելու՝ բա ո՞վ է աշխատելու, եթե կառավարությունն իր ողջ կազմով Սյունիք է մեկնում: Պատասխանը եղել էր՝ մենք գնում ենք ոչ աշխատանքային օրերին: Իսկ թե ինչո՞ւ ՀՀԿ-ականներից որեւէ մեկն այդպես էլ չմասնակցեց «Ժառանգության» համագումարին, թեեւ հրավիրված էին, վարչապետն արդարացել է, թե՝ տեղյակ չեն եղել: Այսպես մի քանի բառ փոխանակելուց հետո վարչապետն ու «Ժառանգության» ներկայացուցիչները փոխադարձաբար հաջողություններ ու բարի ճանապարհ մաղթելով՝ իրար հրաժեշտ տվեցին:

Ն. ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

# Ես ավագանու անդամներին չեմ բաժանում «կողմնակիցների» եւ «հակառակորդների»

## Հարցազրույց Իջեւանի քաղաքապետ Վարդան Ղալումյանի հետ

- Իջեւանի ավագանու անդամ Հրաչ Ներսիսյանը հայտարարել է, որ Դուք քաղաքի բյուջեի սեփական եկամուտները նվազեցրել եք 1.5 միլիոն դրամի չափով, երկրորդ ամիսն է մոտենում՝ աշխատավարձ չեք տալիս մանկապարտեզներին, մշակույթի օջախներին, մարզադպրոցին, թանգարանին, եւ դա այն դեպքում, որ նախկին քաղաքապետ Վարուժան Ներսիսյանը (Հրաչ Ներսիսյանի հարազատ եղբայրը) անցած տարին փակել է 1.8 միլիոն դրամ մնացորդով: Համայնքի ավագանու անդամների մի մասը պնդում է, որ ջրմուղին հունվար ամսվա համար վճարել եք 800 հազար դրամ, իսկ նախորդ տարիների համար այդ գումարը կազմել է մոտ 600 հազար դրամ: Ի՞նչ կասեք այս առթիվ:

- Քաղաքապետի պաշտոնական լիազորությունններն ստանձնել եմ 2011թ. դեկտեմբերի 26-ին: 2012թ. հունվարի 1-ի դրությամբ՝ համայնքի վարչական բյուջեում եղել է 1 միլիոն 276.9 հազար, ֆոնդային բյուջեում՝ 360 հազար 400 դրամ մնացորդ: Վերոհիշյալ 1 միլիոն 276.9 հազար դրամը քաղաքապետարանի բյուջե է փոխանցվել դեկտեմբերի 31-ին, օրվա երկրորդ կեսին, ուստի անհնար էր այդ գումարից որեւէ փոխանցում կատարել: 2012թ. հունվարի 1-ի դրությամբ, քաղաքապետարանն ունեցել է 5 միլիոն 368 հազար դրամ պարտքեր, որից 1 միլիոն 295 հազար դրամը քաղաքային կոմունալ ծառայության հիմնարկի աշխատավարձի պարտքն է, 301 հազարը՝ ՔԿԱԳ-ի (զագս) դեկտեմբեր ամսվա աշխատավարձի, 1 միլիոն 456 հազարը՝ Իջեւանի երաժշտական դպրոցի, 1 միլիոն 695 հազար դրամը՝ «Ավանդույթ» ՓԲԸ-ի պահպանման (աշխատավարձի) պարտքը, 624 հազար դրամը՝ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին ունեցած պարտքը:

2011թ. նախատեսված է եղել մատուցած ծառայության դիմաց



«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին վճարել 1 միլիոն 186 հազար դրամ: 2011թ. նոյեմբերի 28-ի ավագանու նիստով այդ գումարը ավելացվել է 100 հազար դրամով: Ընդյալ տարի այդ գումարներն ամբողջությամբ փոխանցվել են «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին: Սակայն 2011թ. ընթացքում քաղաքապետարանը եւ դրա ենթակայության հիմնարկները օգտագործած ջրի համար նախատեսվածից ավելին են ծախսել 624 հազար դրամ: Քաղաքապետարանն այդ պարտքը մինչեւ այժմ ջրմուղին չի վճարել: Հունվար ամսվա ընթացքում օգտագործած ջրի դիմաց, փետրվարի 24-ին ջրմուղին փոխանցվել է 124 հազար դրամ, իսկ այդ հիմնարկությանը 2011-ից մնացած 624 հազար դրամ պարտքը դեռ պետք է մարվի:

2011թ.-ի համեմատ՝ այս տարվա բյուջեի նախագծում սեփական եկամուտների «նվազման» մասին հայտնեմ, որ համայնքի 2012թ. բյուջեի նախագծում սեփական եկամուտներն ավելացել են 2.3 միլիոն դրամի չափով: Զարմանալի է, որ ավագանու անդամներից ոմանք (նրանց տրամադրվել է բյուջեի նախագիծը) անտեղյակ են այս փաստից: Հավելեմ, որ քաղաքապետարանի եւ կոմունալ ծառայության հիմնարկության աշխատողները ստացել են հունվար ամսվա աշխատավարձը: Իսկ քաղաքապետարանի ենթակայությամբ գործող հիմնարկները հունվարի աշխատավարձը չեն ստացել ոչ այն պատճառով, որ բյուջեում գումար չկա: Քանի որ ավագանու կողմից համայնքի 2012թ. բյուջեն չի հաստատվել, ուստի «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի համաձայն՝ առաջնորդվում ենք նախորդ տարվա բյուջեից փաստացի կատարված ծախսերին համապատասխան: Այսինքն՝ նախորդ տարի այս ժամանակ քաղաքապետարանին ենթակա հիմնարկները հունվարի աշխատավարձը չէին ստացել:

- Ավագանու անդամների մի մասը հայտարարությամբ Ձեզ կոչ է արել հարգել ՏԻՄ օրենքի պահանջները եւ երկու օրը մեկ արտահերթ նիստեր չհրավիրել եւ հաշվի առնելով իրենց առաջարկությունները՝ վերանայել ներկայացված բյուջեն:

- Ավագանու անդամները բյուջեի վերաբերյալ երբեւէ գրավոր առաջարկություններ չեն ներկայացրել: ՏԻՄ օրենքով սահմանված է, որ ավագանու նիստերը հրավիրվում են ոչ պակաս, քան երկու ամիսը մեկ անգամ, նիստերի հրավիրելու հաճախակիության վերաբերյալ սահմանափակում չկա: Նույն օրենքով ավագանու արտահերթ նիստ հրավիրում է քաղաքապետը կամ նրա պաշտոնակատարը՝ իր կամ ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի մեկ երրորդի նախաձեռնությամբ: Ավագանու բողոքող անդամները, ովքեր մի քանի անգամ ավագանու անդամ են ընտրվել, պիտի տեղյակ լինեին ՏԻՄ օրենքին:

- Իջեւանի քաղաքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Աստղիկ Եգանյանը պնդում է, որ Դուք ստորանալիքներով իրենից խոստովանություններ եք կորզել, նաեւ, որ Ամանորին ինքը ձեր տանը վատ է զգացել, ավագանու վերոհիշյալ անդամներն էլ հայտարարել են, որ անհիմն նյութերով թյուրիմացության մեջ եք գցում իրավապահ մարմիններին:

- Աստղիկ Եգանյանը Ամանորին իր երկու հարազատների հետ այցելել է իմ տուն, հյուրասիրվել: Նա մեր տանը չարաշահեց օղին, սեղանի շուրջ վատ զգաց: Պարզապես չեմ ցանկանում այլ մանրամասներ պատմել: Նա սկսեց իր հանդեպ իբր գործադրված ստորանալիքների մասին խոսել այն բանից հետո, երբ փետրվարի 24-ին, նրա նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու կապակցությամբ, 30 օրով կասեցվեց նրա՝ որպես համայնքային ծառայողի ծառայողական պարտականությունների կատարումը: Աստղիկ Եգանյանի եւ քաղաքապետարանի աշխատակազմի այլ աշխատակիցների դիմումների եւ զեկուցագրերի հիման վրա իրավապահ մարմիններին են ուղարկվել նյութեր: Քննությամբ կպարզվի դրանցում նշված փաստերում հանցակազմ կա՞, թե՞ ոչ:

- Նախկին քաղաքապետի կողմնակից ավագանու անդամները բոյկոտում են ավագանու նիստերը կամ նիստերին ներկայանալով՝ դեմ են քվեարկում բյուջեի նախագծին: Դրանից տուժում է Իջեւան քաղաքը: Ո՞րն է այս իրավիճակից ելքը:

- Ես ավագանու անդամներին չեմ բաժանում «կողմնակիցների» եւ «հակառակորդների»: Նրանք ընտրված են ժողովրդի կողմից, քվե ստանալով՝ պարտավոր են ժողովրդի ձայնը հասցնել քաղաքապետարան: Եթե ավագանու անդամները բյուջեի նախագծի եւ այլ հարցերի վերաբերյալ առարկություններ ունեն, պետք է ներկայանան նիստերի եւ ներկայացնեն իրենց պահանջները եւ ոչ թե անհիմն բացակայեն նիստերից: Ավագանու որոշ անդամների «լավ աշխատանքի» հետեւանքով վտանգված է քաղաքում մի շարք ծրագրերի իրականացումը:

Հարցազրույցը վարեց
ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ

# ԲՀԿ-ի ավտոբուսն այրվել է

Երեկ, ժամը 12.30-ի սահմաններում, Երեւանից դեպի Չարենցավան տանող ավտոճանապարհին՝ Չարենցավանի սկզբնամասում, հրդեհ է բռնկվել «ԿՎԶ 1» մակնիշի 23 ՏՏ 498 համարանիշի ավտոբուսում: Այն պատկանում է «Բարգավաճ Հայաստան» կուսակցությանը. ավտոբուսի վրա գրված էր «Բարգավաճ» կուսակցության անունը: Այս ավտոբուսով ուսանողներն անվճար տեղափոխվում էին Երեւան: Այդ պահին ավտոբուսում եղել են Կոտայքի մարզի Ալափարս գյուղի բնակիչ, 56-ամյա վարորդը՝ Ժորա Ասատրյանը, եւ մի երիտասարդ տղա: Երիտասարդը կարողացել է իրեն դուրս նետել ավտոբուսից, իսկ վարորդը ձեռքերի եւ երեսի մասում ստացած այրվածքներով տեղափոխվել է Կոտայքի մարզի «Չարենցավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ:

Դեպքի վայրում հավաքվածների պատմելով, բարեբախտաբար, Չարենցավանի հրշեջ-փրկարարները շուտ են տեղ հասել եւ մարել են ավտոբուսում բռնկված հրդեհը, վառվող ավտոբուսից մի քանի քայլ այն կողմ գտնվում է ավտոմեքենաների գազալցակայանը, եւ կարող էր այդ



ամենը ողբերգական ավարտ ունենալ: Դեպքի վայր են ժամանել ճանապարհային ոստիկանության 2-րդ ստայական գումարտակի 3-րդ վաշտի աշխատակիցները՝ հրամանատար Արսեն Գրիգորյանի գլխավորությամբ: Տեղում է եղել նաեւ ոստիկանության Չարենցավանի բաժնի օպերատիվ խումբը՝ Չարենցավանի ոստիկանապետ Արման Մելքոնյանի գլխավորությամբ: Փաստի առթիվ Չարենցավանի քննչական բաժնում նյութեր են նախապատրաստվում: Քննիչի որոշմամբ նշանակվել են մի շարք փորձաքննություններ:

Ավելի ուշ տեղեկացանք, որ այրվածքներ ստացած քաղաքացուն տեղափոխելու են Երեւան:

Գ. ՇԱՄՇՅԱՆ

### Կենտրոնում ջուր չի լինի

Երեկ «Երեւան Ջուր» ընկերությունը տարածեց հաղորդագրություն՝ իր հաճախորդներին եւ սպառողներին տեղեկացնելով, որ, վերանորոգման աշխատանքների հետ կապված, մարտի 2-ին, ժամը 18.00-ից մինչեւ մարտի 3-ը, ժամը 06.00-ը կդադարեցվի Կենտրոն վարչական շրջանի Կիլիկիա ու Նորագյուղ թաղամասերի եւ հարակից տարածքների ջրամատակարարումը:

«Երեւան Ջուր» ընկերությունը հայցում է բոլոր սպառողների ներողամտությունը՝ պատճառված անհանգստության համար եւ կանխավ շնորհակալություն հայտնում ըմբռնման համար:

# Տարոն Մարգարյանը դեմ է գնացել նույնիսկ օլիգարխին

Երեկ Մաշտոցի պողոտայում գտնվող, ԱԺ պատգամավոր Սամվել Ալեքսանյանին պատկանող Փակ շուկայի տանիքից ծածկը հեռացվում էր, կամարներն էլ քանդվում էին: Ինչը մի շարք քաղաքացիների դժգոհությունն էր առաջացրել: Շինարարական բուռն եռուզեռից դատելով՝ շուկայի նոր սեփականատերը որոշել է շենքը ձեւափոխել եւ հարկայնությունն ավելացնել: Մինչդեռ Հուշարձանների պահպանության գործակալությունը, անդրադառնալով այս հարցին, վստահեցրել էր, որ Փակ շուկայի շենքն ունի հանրապետական նշանակություն եւ պետության կողմից գրանցված հուշարձանների ցանկում է, ուստի շենքի ցանկացած ձեւափոխում, առանց համապատասխան թույլտվության, բացառվում է:

Երեկ, Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը, արձագանքելով երեւանցիների ահազանգերին, հանձնարարել է քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության եւ հողի վերահսկողության վարչության եւ հասարակական կարգի պահպանման վարչության պետերին անձամբ այցելել նշված վայր, ծանոթանալ իրավիճակին եւ ձեռնարկել համապատասխան քայլեր: Ըստ Երեւանի քաղաքապետարանի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչության պարզաբանման. «Տեղում պարզվել է, որ կառույցի սեփականատեր «Թիվ 1 շուկա» ՍՊԸ-ն տա-



րածքում կատարվող վերանորոգման աշխատանքների շրջանակում, առանց համապատասխան թույլտվության առկայության, նախաձեռնել է շինության տանիքի փայտաշեն հատվածի փոխարինման աշխատանքներ: «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի առաջին մասով կազմվել է արձանագրություն՝ առանց թույլտվության տանիքի ծածկի քանդման աշխատանքներ իրականացնելու համար: Աշխատանքները դադարեցված են, եւ տարածքը վերցված է խիստ հսկողության տակ»:

Լ. Բ.

Ա aravot daily
ՇԱԲԱԹ 03.03.2012

Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը, նախագահությամբ դատավոր Հրայր Սարգսյանի, որոշում է կայացրել բավարարել համադասարանցիների միջեւ ծագած վիճաբանության արդյունքում մահացած 10-ամյա Դերենիկ Գաստարյանի իրավահաջորդի ներկայացուցիչ Արայիկ Զալյանի դիմում-բողոքը՝ վերացնելով ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզի քննչական բաժանմունքի քննիչ Ա. Բաղդասարյանի կողմից կայացրած քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը:

10-ամյա Դ. Գաստարյանը մահացել էր 2010թ. հունիսի 5-ին, ՀՀ Չարենցավանի թիվ 5 միջնակարգ դպրոցում՝ մաթեմատիկայի քննության ժամանակ:

Նախաքննության մարմինը քրեական գործ էր հարուցել Դերենիկ Գաստարյանի առողջությանը թեթեւ վնասի հատկանիշներ շղարունակող մարմնական վնասվածքի հիմքով եւ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ կարճել այն:

«Մի կողմից նախաքննության մարմինն ապացուցված է համարել ծեծի ենթարկվելու փաստը, մյուս կողմից՝ ծեծը որպես մահվան պատճառ, քննության չի առել, ինչը պարտավոր էր անել»,- նախաքննության թերությունների մասին է պատմում իրավահաջորդի ներկայացուցիչը:

Արայիկ Զալյանի դիմում-բողոքը բավարարելով՝ դատարանը ուշադրություն է հրավիրում մի շարք հանգամանքների վրա, որոնց վերաբերյալ նախաքննական մարմինը չի իրականացրել լրիվ, օբյեկտիվ, բազմակողմանի քննություն՝ այդկերպ 10-ամյա երեխայի մահվան փաստի վերաբերյալ հանգելով սխալ հետեւության:

«Նախաքննական մարմինը չի պարզել դասղեկ Կակոյանի՝ դասասենյակից բացակայելու ժամանակահատվածը, վերջինիս գտնվելու վայրը եւ պարտականությունների պատշաճ կատարած լինելու հանգամանքը, Դերենիկ Գաստարյանի ծեծի ենթարկվելու ժամը, դրանից հետո դպրոցի հավաքարարների օգնության հասնելու, հիվանդանոց տեղափոխելու ժամանակը»,- նշված է որոշման մեջ:

Քրեական գործ հարուցելու եւ նյութերի նախապատրաստման ողջ ընթացքում նախաքննական մարմինը չի պարզել դպրոցում բուժկետի առկայության եւ միջադեպի պահին բուժկետի աշխատակցի գտնվելու վայրը, վերջինիս կողմից համապատասխան բուժօգնություն ցուցաբերելու դեպքում երեխայի կյանքը փրկելու հնարավորության հանգամանքները:

Բացի այդ՝ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշմամբ տուժող կողմը զրկվել է պատճառված նյութական վնասի հատուցման համար քաղաքացիական հայց ներկայացնելու իրավունքից:

Իրավահաջորդի ներկայացուցչի պնդմամբ՝ նախաքննական մարմինը Դերենիկ Գաստարյանի կյանքի համար պատասխանատու անձի ինքնությունը պարզելու եւ կատարած արարքը որպես հանցագործություն որակելու, նրան պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ որեւէ գործողություն չի իրականացրել:

«Փոխարենը ներգրավել է սույն դեպքում ոչ իրավասու կողմի՝ ՀՀ կրթության եւ գիտության նախարարության կրթական պետական տեսչությանը, որն իր գրությամբ հայտնել է, որ տեղի ունեցած դեպքը դասղեկին, փոխտնօրենին, դպրոցի տնօրենին, մանկավարժական կոլեկտիվի որեւէ անդամին կամ խորհրդակցական մարմիններին վերապահված լիազորությունների կատարման կամ չկատարման հետեւանք չեն»,- ասում է Արայիկ Զալյանը՝ հակադարձելով, որ եթե դասասենյակում մանկավարժ լիներ, ծեծկռտուքը կկանխվեր, իսկ Դերենիկ Գաստարյանը չէր զրկվի կյանքից:

ԱՆՈՒՇ ԲՈՒԼՂԱԴԱՐՅԱՆ
Վանաձոր

# Նոր նախաքննություն կսկսվի

## Դպրոցում ոչ պատշաճ վերահսկողության հետեւանքով մահացած 10-ամյա Դերենիկ Գաստարյանի մահվան հանգամանքները նորից կքննվեն



## Բրիտանական ֆիլմերի ցուցադրության մեկնարկը՝ Վանաձորում

2012 թվականի օլիմպիական խաղերին, Չարլս Դիքենսի երկուհարյուրամյակին եւ մարդու իրավունքներին նվիրված ֆիլմերի ցուցադրությամբ Վանաձորում մեկնարկեց բրիտանական ֆիլմերի 10-րդ հոբելյանական փառատոնը: Չորս օր անընդմեջ վանաձորցիները հնարավորություն կունենան Շառլ Ազնավուրի անվան մշակույթի պալատում անվճար դիտելու բրիտանական ժամանակակից կինոարվեստի լավագույն եւ հիշարժան աշխատանքներ: «Բաբելոնյան հրդեհ», «Ձնջելով Դեյվիդի հետքերը», «Չսիրվածը», «Օլիվեր» ֆիլմերը պատմություններ են մարդկային ճակատագրերի, մարդկային հույզերի ու մտորումների, ռասայական անարդարության դեմ սեւամորթների մղած պայքարի, սիրո, գեղեցկության եւ գերազանցության հերոսական փնտրտուքի, կյանքի հորձանուտում հայտնված որբուկի մասին:

«Ֆիլմերի փառատոնը ոչ միայն նպատակ ունի Հայաստանում հայ հանրությանը ներկայացնելու Մեծ Բրիտանիայի վերջին նորարարական ֆիլմերը, նոր մոտեցումներ, այլեւ ֆիլմերի միջոցով փորձելու է վեր հանել այն գլոբալ հարցերը, որոնք այսօր հուզում են թե Մեծ Բրիտանիային, թե ամբողջ աշխարհին»,- տեղեկացրեց Բրիտանական խորհրդի հայաստանյան գրասենյակի տնօրեն Արեւիկ Սարիբեկյանը: Վանաձորում տրվող մեկնարկից հետո ֆիլմերը կցուցադրվեն Բերդ, Գյումրի քաղաքներում, այնուհետեւ՝ Երեւանում: Վանաձորում ֆիլմերի ցուցադրությանն աջակցել է «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» իրավապաշտպան կազմակերպությունը:

«Քանի որ ֆիլմերը վերաբերում են նաեւ մարդու իրավունքներին, ուստի, որպես իրավապաշտպան կազմակերպություն, մեր աջակցությունն ենք ցուցաբերում Վանաձորում ցուցադրությունը կազմակերպելու համար»,- «Առավոտին» ասաց ՀՔԱՎ-ի հասարակայնության հետ կապերի բաժնի համակարգող Անի Ղամբարյանը:

Ա. Բ.
Վանաձոր

## Կորել է «Համալսարանականներ» համատիրությունը

ՀՀ վարչական դատարանը 3 ամիս շարունակ փնտրում է «Համալսարանականներ» համատիրության նախագահ Արմեն Թադեւոսյանին՝ դատական նիստի մասին նրան ծանուցագիրը հանձնելու համար: Սակայն «Համալսարանականներ» համատիրությունն ու նրա նախագահը, պարզվում է, ընդհատակում են գործում: Նրանց գործունեության հասցեն գրանցված չէ ՀՀ որեւէ տեղեկատուում: Բոլոր հնարավոր հասցեներով դատարանի ուղարկած ծանուցագրերը վերադարձվում են՝ հասցեատիրոջը չհայտնաբերելու պատճառով:

Համատիրությանը փնտրում է հատկապես Ինֆորմացիայի ազատության կենտրոնը, որն անցյալ տարվա նոյեմբերի 11-ին դիմել է հայցադիմումով դատարան՝ համատիրության նախագահ Արմեն Թադեւոսյանի դեմ տեղեկատվություն չտրամադրելու եւ ոչ տեսանելի աշխատելու համար: Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկություններ է պահանջել Արաբկիր, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Ծարավ Աղբյուրի 55/5 շենքի վարձավճարների գանձման, սպասարկման գումարների չափի, սպասարկման գումարների գանձման հիմքերի մասին, խնդրելով իրենց տրամադրել «Համալսարանականներ» համատիրության 2011թ. բյուջեի պատճեն եւ գործունեության վերաբերյալ այլ տեղեկություններ: Դատական հայցով կենտրոնը պահանջում է պարտավորեցնել «Համալսարանականներ» համատիրությանը՝ հնգօրյա ժամկետում տրամադրել հայցվող տեղեկատվությունը, ինչպես նաեւ պարտավորեցնել «Համալսարանականներ» համատիրությանը հայցվող տեղեկատվությունը հրապարակել հանրության համար մատչելի վայրում:

Հիշեցնենք, որ հենց այս համատիրությունն է կոչված սպասարկել ՀՀ նախագահի բարձր հովանու ներքո կառուցված, ԵՊՀ դասախոսների համար նախատեսված Ծարավ Աղբյուրի 55/5 շենքը:

«Համալսարանականներին» գտնողներին խոստանում ենք հրապարակային շնորհակալություն:

Ռ. ՄԻՆԱՍՅԱՆ

# Ամպակոլոլ շինովնիկներ



Ոչ մի կերպ չեմ կարողանում համակերպվել այն փաստի հետ, որ ՀՀ 3-րդ նախագահ Սերժ Սարգսյանի կողմից իրականացվող բարեփոխումների արդյունքում ՀՀ-ից արտագաղթը, 2007թ. 3. 223-ի համեմատությամբ, 2011թ.-ին հասել է 81.499-ի, այսինքն՝ 4 տարվա ընթացքում Հայաստանի հայաթափումն ավելացել է երկրաչափական պրոգրեսիայով՝ ավելի քան 25 անգամ: Կարծես թե բոլորն են համաձայն, որ արտագաղթի պատճառը ոչ միայն սոցիալական է, այլեւ երկրում առկա անարդարությունը, որից մարդիկ պարզապես փախչում են՝ հեռանալով հայրենիքից:

Ուրեմն ինչու է ստեղծվել մի իրավիճակ, երբ մի կողմից հանրապետությունում իրականացվում են բարեփոխումներ՝ սոցիալական, դատաիրավական, կրթական, պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման ոլորտներում, մյուս կողմից՝ արտագաղթը ներգաղթի վերածվելու փոխարեն՝ վերաճում է հայաթափման: Երկու օրինակով ցույց տամ, թե ամպերի մեջ նստած եւ ներքեւում կատարվողը չտեսնող (ամպակոլոլ) մեր շինովնիկներն ինչպես են արձագանքում հանրությանը հուզող հարցերին:

Հանրապետության նախագահը 4 տարի է՝ հայտարարում է, որ հանրությունը չի վստահում դատարաններին, կառավարության պատվերով իրականացվում են սոցհարցումներ, որոնց համաձայն՝ ամենակոռումպացվածը համարվում է դատական համակարգը: Վերջերս արդարադատության նախարարը հայտարարեց, որ դատարանների նկատմամբ անվստահությունը կազմում է 70-80 տոկոս, սակայն արի ու տես, որ օրերս ՀՀ դատավորների ընդհանուր ժողովում հայտարարվեց, որ 2011թ.-ին գրանցվել են մի շարք թերություններ՝ դատավորների կողմից դատական նիստերին ուշացումով ներկայանալու, դատական ակտերը կողմերին ուշացումներով հանձնելու, գործերի քննության ձգձգումները:

Ամպերի մեջ նստած մեր դատական համակարգի ղեկավարները իսկապե՞ս կարծում են, որ դատական համակարգի նկատմամբ 80 տոկոսի հասնող անվստահության պատճառը դատական նիստերի նշանակված ժամկետից ուշ սկսելն է կամ գործերի ձգձգումը:

Կամ՝ Մաշտոցի այգում 22 օր է՝ ինքնաբուխ հավաքներ են ընթանում քաղաքապետարանի կողմից այդտեղ իրականացվող շինարարությունների դեմ, որոնք իրականացվում են ծառերին անմիջապես կից, կանաչ գոտիների վրա: Այս թեման ամենաքննարկվողն է մամուլում եւ սոցիալական ցանցերում:

Սակայն արի ու տես, որ ամպակոլոլ մեկ այլ շինովնիկ՝ Երեւանի գլխավոր ճարտարապետը Հանրային խորհրդում հայտարարում է, որ բողոքողները չեն ցանկանում, որպեսզի կառուցված խանութներում շորեր վաճառվեն, նրանց հետ կբանակցենք գրքեր վաճառելու ուղղությամբ:

Ահա սա է պատկերը, մարդիկ մի բանից են դժգոհում, մեր շինովնիկները մեկ այլ բան են ընկալում եւ այդ ուղղությամբ «բարեփոխումներ» իրականացնում, իսկ դժգոհության իրական պատճառը շարունակում է մնալ՝ դատարանները շարունակում են անարդար վճիռներ կայացնել, քաղաքապետարանը շարունակում է կանաչ գոտիները շինհրապարակի վերածել, իսկ Հայաստանն էլ հայաթափվում է:

Կարո՞ղ է մեր շինովնիկները մեկ-մեկ հեծանիվով գնան գործի, միգուցե էդ դեպքում ամպերից իջնեն ու տեսնեն, թե իրականում ինչ խնդիրներ կան երկրում:

ԿԱՐԵՆ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ
Փաստաբան

## ԱՐՄԵՆ ՇԵԿՈՅԱՆ

# ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ

ՎԵՊ

ԳԻՐՔ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ



Սկիզբը 187, 192, 197, 202, 207, 212, 217, 222, 227, 232, 237, 242, 247, 5, 10, 15, 20, 25, 30, 35-ում:

Գլուխ քսանմեկերորդ

## ԳՐԱՎՈՐ ԵՎ ԲԱՆԱՎՈՐ

Եվ քանի որ Ջավախյանը ծագումով շնողցի ու ալավերդցի է, շարքային ու միամիտ ընթերցողը հեշտուիանգիստ կարող է հավատալ, որ այրումցի էս Հասանն իրոք մի ամբողջ կով է տարտք եղել Ջավախյանի հարազատ տատ Աշոտին, մինչդեռ ձեր խոնարի ծառան ի վիճակի չի հավատալ Ջավախյանի պատմվածքի էս ավելացված մանրամասներին՝ ոչ միայն էն պատճառով, որ ձեր խոնարի ծառան էդ պատմության իսկական ու իրական տարբերակն անձամբ է Չաղ Ֆելոյից լսել, այլեւ էն պատճառով, որ ձեր խոնարի ծառան ինքն էլ է արձակագիր ու գրող եւ շատ լավ գիտի, որ արձակագիր Լեւոն Ջավախյանի էս բոլոր բստրածները գրական ու գրողական տեսանկյունից միանգամայն ընդունելի ու թույլատրելի են, եւ գրողական տեսանկյունից թույլատրելի է նաեւ, որ հակառակորդ ազգի ներկայացուցիչներից մեկնումեկը դրական ու մարդկային հատկանիշներով օժտվի ու ներկայացվի՝ մինչեւ իսկ պատերազմական ու կոնֆլիկտային իրավիճակներում, եւ, եթե հիշում եք, ռազմաճակատային թշնամուն նաեւ Ստեփան Զորյանն է մարդկային գծերով ներկայացրել իր «Զրիորի մոտ» պատմվածքում, բայց համաձայնվեք, որ մանավանդ հայի համար գերմանացին միանգամայն ժամանակավոր թշնամի էր, եւ հիմնականում էդ է պատճառը, որ Զորյանի էդ պատմվածքը մշտապես զետեղված է մեր գրականության դասագրքերում ու քրեստոմատիաներում՝ որպես խաղաղությանն ու մարդկայնությանը ձոնված բացառիկ նմուշ, մինչդեռ Ջավախյանի խնդրո առարկա պատմվածքը երբեւէ դպրոցական դասագիրք չի թափանցի, որովհետեւ միջին վիճակագրական թուրքն ու ադրբեջանցին մեր մշտական թշնամյաց ցուցակը միանձնյա են գլխավորում, ավելի ճիշտ՝ մեր մշտական թշնամյաց ցուցակն առայժմ էդ երկուսն են համալրում, եւ բոլոր նախադրյալները կան, որ առնվազն առաջիկա հազարամյակում միջին վիճակագրական թուրքն ու ադրբեջանցին հայի համար լինելու են այն, ինչ հիմա՝ էս պահին կան. այսինքն, առաջիկա հազարամյակում ոչ մի շանս չկա, որ Ջավախյանի խնդրո առարկա պատմվածքը դպրոցական դասագիրք թափանցի, եւ էս բանն ինձնից լավ ինքը՝ արձակագիր Լեւոն Ջավախյանն է հասկանում, եւ խոսքն, իհարկե, հայկական դպրոցների դասագրքերին է վերաբերում, որովհետեւ միանգամայն հնարավոր է, որ թուրքերն ու մանավանդ ադրբեջանցիք աշխարհաքաղաքական իրավիճակը ճիշտ ու սթափ գնահատելով՝ վերցնեն ու Ջավախյանի էդ «Քիրվան» պատմվածքը փառավորապես զետեղեն իրենց դպրոցական դասագրքերի մեջ, եւ շատ հնարավոր է՝ հենց էդպես էլ անեն, որովհետեւ Ջավախյանի էդ «Քիրվան» պատմվածքում ադրբեջանցի Հասանը միանգամայն մարդկային ու միանգամայն դրական գծերով է օժտված ու համեմված, եւ չնայած Չաղ Ֆելոյի տարբերակում էլ էր էդ ադրբեջանցին միանգամայն դրական ներկայանում, եւ չնայած Չաղ Ֆելոն էդ պատմությունն աչուձախ բոլորին պատմում էր, ես հիմա հիշողությունս միացնելով ու լարելով՝ ոչ մի կերպ չեմ կարողանում մտաբերել, որ որեւէ մեկը Չաղին մեղադրած լինի՝ էդ պատմությունն աչուձախ պատմելու ու տիրաժավորելու համար, մինչդեռ էդ նույն պատմության գրավոր տարբերակի համար մերոնք Ջավախյանին ոչ միայն չներեցին, այլեւ շարունակում են չներել, եւ եթե հաշվի առնենք նաեւ, որ Չաղի բանավոր տարբերակն անհամեմատ շատ ունկնդիր ուներ, քան Ջավախյանի էդ պատմվածքը երկու լեզվով տպագրած թերթը՝ ընթերցող, պիտի եւս մի անգամ խոստովանենք, որ հայ ընթերցողներն ու մանավանդ հայ չընթերցողները գրավոր ու մանավանդ տպագիր խոսքին անհամեմատ լուրջ են վերաբերվում, քան՝ բանավորին, եւ Ջավախյանի դեպքում եւս մի անգամ համոզվեցինք նաեւ, որ հայ ընթերցողներն ու մանավանդ չընթերցողները ռուսերեն գրավոր ու տպագիր խոսքին առավել լուրջ են վերաբերվում, քան՝ հայերեն գրավոր ու տպագիր խոսքին, եւ չնայած «Առավոտի» գլխավոր խմբագիր Արամ Աբրահամյանն իր թերթի աշխատողներին բազմիցս խնդրել է իր թերթի էջերում էդ «Ազատամտություն» թերթի անունը չգրել՝ ոչ դրական եւ ոչ էլ բացասական իմաստով, ես ահա գրում եմ, ընդ որում՝ ոչ դրական ու ոչ էլ բացասական իմաստով, եւ ստիպված եմ լինելու եւս մի քանի անգամ գրել՝ ոչ միայն էն պատճառով, որ Ջավախյանի էդ պատմվածքը հենց էդ թերթն էր երկու լեզվով տպագրել, այլեւ էն պատճառով, որ ավելի քան համոզված եմ՝ մինչեւ էս հատվածս «Առավոտում» տպագրվի, էդ «Ազատամտությունն» այլեւս գոյություն չի ունենա, ընդ որում՝ իշխանություններն անձամբ կկասեցնեն էդ թերթի հրատարակությունը, եւ անկախ Հայաստանի պատմության մեջ դա առաջին դեպքը կլինի՝ երբ իշխանությունն իշխանամետ թերթ է փակում, եւ էս չարագուշակությունս միանգամայն հիմնավոր է, ինչպես նաեւ՝ անխուսափելի, որովհետեւ էս թերթն ու իր խմբագիրն իշխանություններին ոչ միայն ընդդիմությունից են պաշտպանում, այլեւ՝ իշխանությունից, եւ, բնական է, էս վերջինս դժվար թե երկար հանդուրժի էս յուրահատուկ ու աննախադեպ թերթի էս յուրահատուկ ու աննախադեպ ազատամտությունը, իսկ ինչ վերաբերում է Ջավախյանի էդ «Քիրվա» պատմվածքը նախ հայերեն, ապա եւ ռուսերեն տարբերակով տպագրելուն, էս դեպքում էլ է, իհարկե, «Ազատամտությունը» յուրահատուկ ազատամտություն ու համարձակություն հանդես բերել, որովհետեւ Հայաստանում ոչ միայն թուրքի ու ադրբեջանցու մասին դրական շեշտադրումներով գրելն է համարձակություն պահանջում, այլեւ՝ տպագրելը. այսինքն, էդ «Ազատամտություն» թերթի Արտյոմ Խաչատրյան անունով ու Պազլիկի մականունով գլխավոր խմբագիրն իր խմբագրած թերթում Ջավախյանի էդ պատմվածքը հայերեն ու մանավանդ ռուսերեն տպագրելով՝ իսկապես համարձակություն է հանդես բերել, որովհետեւ թուրքերի ու մանավանդ ադրբեջանցիների մասին կարծիքը մեզանում ոչ միայն վերջնականապես ձեւավորված ու կարծրացած է, այլեւ շարունակում է ավելի ու ավելի կարծրանալ, եւ մինչեւ Ջավախյանի էդ պատմվածքի ու ադրբեջանավրացական իր էդ մրցանակի մասին էս պատմությունս ավարտեմ ու տպագրեմ, թուրքերի ու մանավանդ ադրբեջանցիների մասին հայերիս կարծիքն առավել ամբողջացած ու առավել կարծրացած կլինի, եւ արդեն հայ ընթերցող ու չընթերցող հասարակությունը ոչ միայն Ջավախյանին ու Պազլիկին կմեղադրի, այլեւ ձեր խոնարի ծառային՝ արձակագիր ու արծաթավաճառ Լեւոն Ջավախյանի գրական ու գրողական մոտեցումներին ըմբռնումով վերաբերվելու համար, եւ դրանից ոչ ձեր խոնարի ծառան կշահի, ոչ Ջավախյանը, ոչ Պազլիկին, ոչ Ֆելիկին եւ ոչ էլ որեւէ ուրիշ մեկը, եւ ընդամենը թուրքերի ու մանավանդ ադրբեջանցիների մասին մեր ամբողջական կարծիքն առավել կամբողջանա, եւ չնայած էսքան սրտացավորեն եմ խոսում ու գրում մեր ազգային գաղափարախոսության ամբողջականության ու կարծրության մասին, այդուհանդերձ, շատ լավ գիտեմ ու հրաշալի հասկանում եմ, որ թուրքերն ու մանավանդ ադրբեջանցիներն էլ մեր արեւով առանձնապես չեն երդվում ու իրենք էլ մեր մասին ավարտուն ու վերջնական կարծիք ունեն, ու էս ասածս ավելի շատ ադրբեջանցիներին է վերաբերում, եւ եթե թուրք Փամուկը հայերիս մասին դրական արտահայտվելով ու Նոբելյանն ստանալով՝ էսօրվա դրությամբ արտասահմաններում ազատորեն ֆոֆռում է, ադրբեջանցու դեպքում դժվար թե էդպես լիներ, եւ եթե որեւէ ադրբեջանցի գրող որեւէ հայի դրական կերպար ստեղծի, երեւի տեղնուտեղը կսպանեն, ընդ որում՝ առանց դատի ու դատաստանի, էլ չեմ ասում՝ ինչ կլիներ, եթե էդ ադրբեջանցի գրողն իր հայ կերպարին դրականորեն ներկայացնելուց հետո հայերից ու վրացիներից հազարդոլարանոց մրցանակ ստանար, եւ հիմա էդ պատկերացնելով ու էդ մասին մտածելով՝ սկսում եմ հասկանալ ու համոզվել, որ, այնուամենայնիվ, հայերս ադրբեջանցիներից անհամեմատ ներողամիտ ու հանդուրժող ենք, եւ ադրբեջանական ազգային մտածողությունն էլ էսօրվա դրությամբ ավելի կարծրացած է, քան՝ հայկականը, որովհետեւ Ջավախյանն էդ «Քիրվա» պատմվածքում էդ ադրբեջանցի Հասանի մասին դրական արտահայտվելուց ու Թիֆլիսում էդ հազարդոլարանոց մրցանակը կորզելուց հետո վերադառնալով Երեւան՝ ընդամենը մի քանի գրավոր կշտամբանքի արժանացավ, եւ կշտամբանքները հիմնականում բանավոր էին՝ հիմնականում իր դաշնակցական ընկերների կողմից, դրան էլ գումարած՝ թերթերից մեկի գրավոր մի քանի կշտամբանքները, որոնցից մեկը Ջավախյանի վրա լավ էլ ազդել էր, որովհետեւ էդ թերթի էդ հրապարակման մեջ էդ թերթի լրագրողը սեւով սպիտակի վրա հայտարարել էր, որ Լեւոն Ջավախյանով պարտավոր են լրջագույնս զբաղվել մեր ազգային անվտանգության մարմինները, որովհետեւ Ջավախյանի էդ «Քիր-

վան» չափազանց լուրջ հարված է մեր ազգային ու պետական անվտանգությանը, եւ, ինչպես տեսնում եք, էդ թերթն ու էդ լրագրողը չափազանց լուրջ են վերաբերվել Զավախյանի էդ «Քիրվային» ու Հասանին, եւ ցավալին այն է, որ էս պահին արդեն կասեցված է եւ լույս չի տեսնում «Ազատամտություն» թերթը, որն անկասկած Զավախյանին կպաշտպաներ էդ, ուրեմն, գրավոր ու բանավոր հարձակումներից, ու էս պահին երեւի ձեր մտքով էլ անցավ, որ էս առթիվ Զավախյանին լիասիրտ ու միանգամայն անշահախնդրորեն պիտի պաշտպաներ Աշոտ Բլեյանը, բայց էսօրվա դրությամբ հայ եւ ադրբեջանցի ժողովուրդների բարեկամության տեսլականն էնքան է ապատեսլականացել, որ արդեն նույնիսկ Բլեյանն է էդ թեմայից վազն անցել ու ձեռ քաշել, եւ եթե ավելի անկեղծ լինեմ, պիտի ասեմ նաեւ, որ երկու ժողովուրդների բարեկամության էդ թեման անձամբ Զավախյանին էլ առանձնապես չի հուզում. պարզապես Չաղ Ֆելոյի էդ պատմությունն էնքան գայթակղիչ էր, որ Զավախյանը չէր կարող էդ պատմությունը պատմվածքի ու գեղարվեստական գրականության չվերածել, եւ երբ հիմա էս ամենի մասին շարունակում եմ գրել, «Ազատամտությունն» արդեն փակված է, այլապես էդ թերթը Զավախյանին կպաշտպաներ բանավոր ու գրավոր հարվածներից, բայց արդեն մի քանի շաբաթ է՝ էդ թերթը գոյություն չունի, եւ էդ թերթի փակվելը ոչ Զավախյանի պատմվածքի հետ կապ ունի, ոչ էլ՝ իմ կանխագուշակության, որովհետեւ երբ ես էդ թերթի փակվելը կանխագուշակեցի, արդեն էդ թերթի փակման մասին ռեալ խոսակցություններ կային, եւ էդ թերթի փակումն անխուսափելի էր, որովհետեւ էդ «Ազատամտությունն» էն աստիճանի էր ազատամտացել, որ աջուձախ ու անխտիր բոլորի դեմ գրում էր՝ բացառությամբ, թերեւս, Սերժ Սարգսյանի, եւ էդ թերթը Սերժ Սարգսյանին ոչ միայն ընդդիմությունից էր պաշտպանում, այլեւ տարատեսակ ու տարանուն իշխանավորներից ու իշխանամետներից, ու էդ առումով էդ թերթը մեզանում միանգամայն նորություն էր, եւ էդ թերթի փակվելու առթիվ չարախնդալու իրավունք որեւէ մեկս չունի, որովհետեւ մեզանում ցանկացած թերթի ու լրատվամիջոցի փակվելը չափազանց չարագուշակ նախադեպ է այլ թերթերի ու լրատվամիջոցների համար, եւ ահա արդեն մի քանի շաբաթ է՝ հայ հասարակությունն ու հայ ընթերցողը զրկված են «Ազատամտությունից», եւ առաջին հերթին Զավախյանն է զրկված, որովհետեւ եթե էդ թերթն էս պահին գոյություն ունենար, Զավախյանին բոլորեքյան կպաշտպաներ էս բոլորեքյան հարվածներից, եւ պարտավոր էր պաշտպանել, որովհետեւ էդ թերթն էր էդ պատմվածքը հայերեն ու ռուսերեն տպագրել եւ, փաստորեն, Զավախյանին կրակը գցել, չնայած, մեր մեջ ասած, Զավախյանն առանձնապես դժգոհ չի իր պատմվածքի շուրջ ծավալված էս աղմուկից. ավելին. Զավախյանը Թիֆլիս մեկնելով եւ կովկասյան ժողովուրդների բարեկամությունը մարմնավորող էդ մրցանակն ու էդ մրցանակը մարմնավորող հազար դոլարն ստանալով՝ արդեն վերադարձել Երեւան եւ աջուձախ հարցազրույցներ է տալիս՝ անկեղծորեն խոստովանելով, որ շատ տխուր իրողություն է, երբ հայ գրողը ոչ թե Հայաստանի գրողների միությունից է մրցանակ ստանում, այլ՝ միանգամայն օտար ու անծանոթ կազմակերպությունից, եւ Զավախյանն իսկապես էդպես արտահայտվելու իրավունք ունի, որովհետեւ մի քանի գրքերի հեղինակ լինելով՝ միանգամայն արժանի էր մեր հայաստանյան մրցանակներից յուրաքանչյուրին, բայց, այսուհանդերձ, Զավախյանը բանավոր զրույցների ժամանակ իր մասին ավելի անկեղծ է արտահայտվում, քան՝ էդ հարցազրույցներում, եւ բանավոր զրույցներում իր հանդեպ իր հիացմունքը չթաքցնելով՝ հետեւյալ անվիճելի միտքն է արտահայտում. եթե ինքն ընդամենը մի անգամ թարգմանվելով՝ միանգամից օտարների կողմից նկատվեց ու մրցանակի արժանացավ, պատկերացրեք՝ էսօրվա օրով ինչքան մրցանակներ կունենար, եթե ուրիշների պես տասնյակ լեզուներով թարգմանված ու տպագրված լիներ, եւ չնայած էս միտքն առաջինը Լիոդն հայտնեց, Լիոդից էդ միտքը նվեր ստանալով՝ հիմա Զավախյանն ինքն է Լիոդի էդ միտքն աջուձախ տարածում, եւ, իսկապես, եթե Զավախյանի արձակի էդ առաջին ու միակ թարգմանությունն էդքան ուշադրության ու մրցանակի արժանացավ, միանգամայն տրամաբանական է, որ հետագա թարգմանվելու դեպքում էլ Զավախյանն ուշադրության ու զանազան այլ մրցանակների կարժանանա, մանավանդ՝ եթե անգլերեն ու միջազգային նշանակության այլ լեզուներով թարգմանվի ու հրատարակվի, եւ չնայած ռուսերենն էլ պակաս միջազգային լեզու չի, այդուհանդերձ, անգլերենի հետ չի կարող համեմատվել՝ մանավանդ գրական կոմունիկացիաների եւ հատկապես Նոբելյան մրցանակի ներկայացման տեսանկյունից, եւ անգլերեն թարգմանվելու ու հրատարակվելու դեպքում մարդիկ եւ ներառյալ իր ընկեր Լիոդն դժվար թե շարունակեն Զավախյանի Նոբելյանի թեման կատակի տալ, եւ էս վերջին միտքն արդեն անձամբ Զավախյանի մտքում է ծագել, եւ դա միանգամայն բնական է, որովհետեւ անձամբ ի՛ր արձակն է առաջին անգամ թարգմանվելով՝ էդաստիճան ուշադրության ու մրցանակի արժանացել, եւ եթե ոմանք կարծում են թե՝ ինքն իր ադրբեջանցի հերոսին մարդկային գծերով օժտելու համար է էդ ուշադրությանն ու էդ մրցանակին արժանացել, էդպես կարծողներն ու էդպես մտածողները մի քիչ ավելի լավ մտածելու դեպքում պիտի հիշեն, որ Օրհան Փամուկն էլ զուտ գրական ու գեղարվեստական արժանիքների համար չի իր Նոբելյանն ստացել, եւ բոլորը գիտեն, որ Փամուկն իր Նոբելյանի ճանապարհին եւ մանավանդ Նոբելյանն ստանալուց հետո Թուրքիայում շատերի զայրույթն ու կատաղությունը շարժեց՝ ինչպես որ մեզանում Զավախյանն իր «Քիրվայով» որոշ լրագրողների, լրատվամիջոցների, դաշնակցականների եւ նույնիսկ որոշ հակադաշնակցականների զայրույթը հարուցեց, եւ չնայած լուսահոգի Չաղ Ֆելոն անձամբ էր դաշնակցական, Չաղին ոչ կյանքի օրոք եւ ոչ էլ հետմահու որեւէ մեկը չմեղադրեց էդ նույն պատմությունն աջուձախ պատմելու համար. ավելին. երբ Չաղը «Պաղլավոկում» բոլորին իր գլխին հավաքած՝ էդ պատմությունն էր պատմում, բոլորը հաճույքով լսում էին, եւ անձամբ ձեր խոնարհ ծառան էլ էր հաճույքով լսում, ընդ որում՝ ձեր խոնարհ ծառան բազմիցս է էդ պատմությունը Չաղ Ֆելոյի կատարմամբ լսել, եւ միշտ էլ իր էդ պատմությունը մեծ հաճույքով եմ ունկնդրել, որովհետեւ լուսահոգին ոչ միայն չտեսնված պատմող, այլեւ պատմողական իմպրովիզացիայի անզուգական վարպետ էր, եւ միեւնույն պատմությունը պատմելիս՝ ամեն անգամ նորանոր էպիզոդներ ու նորանոր մանրամասներ էր բստրելով ավելացնում, եւ չնայած Չաղի պատմածով էլ էր էդ ադրբեջանցի փախստականը միանգամայն դրական ներկայանում, ոչ ոք եւ նույնիսկ դաշնակցականներն ու մինչեւ անգամ Խաթլամաջյան Սեյրանը Չաղին թշնամասիրության մեջ չէին մեղադրում, եւ էդ օրերին Ֆիզիկոս Սաֆարյան Չաղ Ֆելիքսը ոչ միայն դաշնակցության երեւելի ու երեւացող անդամներից էր, այլեւ՝ հայոց առաջին ու միակ Նախախորհրդարանի առաջին ու հիմնադիր նախագահը, բայց, չնայած դրան, Սաֆարյան Ֆելոն առանց երկնչելու ու միանգամայն անկաշկանդ էր ինչ-որ մեկից լսած էդ իրական պատմությունը պատմում, եւ ոչ ոք Չաղին թրքասիրության ու ադրբեջանասիրության մեջ չէր մեղադրում՝ ոչ թե էն պատճառով, որ էդ պահի դրությամբ Չաղը հայրենի ընդդիմության շարժիչ ուժն էր, այլ էն պատճառով, որ լուսահոգին հայրենի ընդդիմության շարժիչ ուժը լինելով՝ իր էդ պատմությունն ընդամենը բանավոր էր պատմում ու վերապատմում, ի տարբերություն Զավախյանի, որն էդ պատմությունը ոչ միայն գրավոր ու տպատառ հայերենով հրատարակեց, այլեւ՝ գրավոր ու տպատառ ռուսերենով, եւ դրանից հետո եւս մի անգամ համոզվեցինք, որ հայերս ինչքան որ հանդուրժող ենք բանավոր խոսքի նկատմամբ, մի հազար էդքան անհանդուրժող ենք մեր գրավոր խոսքի հանդեպ, ու հավանաբար էդ է պատճառը, որ մեր բանավոր խոսքը մեր գրավոր խոսքից անհամեմատ ազատ ու անկաշկանդ է, ու նաեւ էդ է պատճառը, որ մեր լեզուն ավելի հաճախ մեր բանավորի շնորհիվ է փոփոխվում ու զարգանում, քան՝ մեր գրավոր գրականության, եւ բանավորի հանդեպ մեր էդ համատարած ու մասսայական հանդուրժողականությունն է պատճառը, որ մեր անեկդոտներն անհամեմատ սրամիտ ու ազատամիտ են, քան՝ մեր գրողների գրած պատմություններն ու գրքերը, եւ մեր բանավորի ազատության, ազատամտության, սրամտության, սանձարձակության ու պատկերավորության շնորհիվ մեր էպոսը ոչ միայն ուրիշների էպոսներին է գերազանցում, այլեւ մեր իսկ գրողների ստեղծած գրականությանը, եւ Չաղ Ֆելոյի ու Զավախյանի օրինակներն էլ են ապացույց, որ մենք մեր բանավորի առումով անհամեմատ հանդուրժող ենք, քան՝ մեր գրավորի, եւ եթե Սաֆարյան Չաղ Ֆելոյի էդ ադրբեջանցի փախստականի մասին պատմությունն էդքան ուշադիր ու էդքան հափշտակված լսում էինք, պատճառը ոչ թե Չաղի ընդդիմադիր հեղինակությունն էր, այլ վերստին՝ մեր բանավորի հանդեպ մեր անկեղծ ու անթաքույց սերը, մանավանդ որ, էդ պահի դրությամբ, Ֆելոն ոչ թե սովորական ընդդիմություն էր, այլ՝ ընդդիմության ընդդիմություն, որովհետեւ, էդ պահի դրությամբ, օրինական ու պաշտոնական ընդդիմությունը «Ղարաբաղ» կոմիտեն էր, իսկ Սաֆարյան Ֆելիքսն ու իր Նախախորհրդարանը «Ղարաբաղ» կոմիտեի նկատմամբ էին ընդդիմություն, բայց, էս ամենից զատ ու էս ամենից բացի, Սաֆարյան Ֆելիքսն անզուգական ու չտեսնված պատմող էր, եւ մասիսաբնակ ադրբեջանցու մասին էդ պատմությունը Չաղի բազմաբովանդակ ռեպերտուարի պատառիկներից ընդամենը մեկն էր, եւ «Ղարաբաղ» կոմիտեին ընդդիմադիր հայոց ազգային Նախախորհրդարանի հիմնադիր նախագահ Սաֆարյան Ֆելիքսի բոլոր պատմություններն էին չտեսնված ու անկրկնելի, եւ դրանք բառի բուն իմաստով էին անկրկնելի, որովհետեւ ընդդիմադիր Ֆիզիկոս Սաֆարյան Ֆելոն նույնիսկ միեւնույն պատմությու-



նը պատմելիս չէր կրկնվում եւ միշտ տարբեր էր՝ բոլորից ու նաեւ իրենից, եւ միեւնույն պատմության հիմնական կմախքն ու սյուժեն պահելով՝ ամեն անգամ էդ սյուժեն նորանոր դրվագներով ու մանրամասներով էր հարստացնում, եւ, եթե կուզեք իմանալ, իրականում ոչ թե ես ու Զավախյանը պիտի գրող ու արձակագիր դառած լինեինք, այլ հենց ինքը՝ ընդդիմադիր Ֆիզիկոս Սաֆարյան Չաղ Ֆելոն, եւ եթե գրող դառած լիներ, ինքը, ի տարբերություն ինձ, Զավախյանի ու մյուս գրողների, ոչ թե ուրիշների պատմածները գրի կառներ ու գրի կվերածեր, այլ՝ իր իսկ պատմությունները, բայց, ի դժբախտություն հայ ընթերցողի, հայոց առաջին ու վերջին Նախախորհրդարանի հիմնադիր նախագահ Սաֆարյան Ֆելիքսն ազատ ժամերին ոչ թե գրելով ու գրականությամբ էր զբաղվում, այլ հիմնականում՝ ասացողությամբ, եւ երբեմն-երբեմն էլ՝ Ֆիզիկայով, եւ կյանքի վերջին շրջանում՝ նաեւ քաղաքականությամբ, իսկ ավելի ճշգրիտ՝ ընդդիմադիր քաղաքականությամբ, եւ եթե ճակատագրի քմահաճույքով ոչ թե Չաղ Ֆելոն գրող դարձավ, այլ՝ Զավախյանն ու ես, գոնե պիտի բարի լինենք՝ Չաղի էդ բազմաբովանդակ բանահյուսությունը գրի ու գրականության վերածել, եւ Զավախյանը, փաստորեն, հենց էդ էլ անում է, բայց, արի ու տես, ընթերցող եւ մանավանդ չընթերցող հասարակայնությունը գրողներին ընդհանրապես եւ Զավախյանին մասնավորապես արգելում է գրել էն բաները՝ որ թույլ էր տրվում պատմել հայոց առաջին ու վերջին Նախախորհրդարանի առաջին ու վերջին նախագահի, մասնագիտությամբ Ֆիզիկոս, կոչումով ասացող եւ էությամբ ընդդիմադիր Սաֆարյան Ֆելիքսին, որովհետեւ հայոց առաջին ու միակ Նախախորհրդարանի հիմնադիր նախագահի Սաֆարյան Ֆելիքսը չտեսնված պատմող ու բացառիկ քաղցրախոս էր, եւ հեչ պատահական չէր, որ շաքարից ու շաքարի ավելցուկից էր տանջվում ու տառապում եւ հենց էդ ավելցուկի պատճառով էլ հեռացավ կյանքից ու մեզանից, եւ իր բացակայության պայմաններում հայոց առաջին Նախախորհրդարանը որբանալով՝ ցրիվ եկավ ու վերացավ երկրի երեսից, եւ իր բացակայության պայմաններում շատ ու շատ պատմություններ որբացան՝ անտերության մատնվելով ու լավագույն դեպքում Զավախյանի, իմ եւ ուրիշների խնամքին հանձնվելով:

ՎԵՐՋ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ԳՐՔԻ

*Շարունակությունը հաջորդ շաբաթ՝ «Առավոտի» կայքում*

# Սարկոզիի ընտրությունը

«Վիկիլիքսին» հավատացողներին այլ բան չես համոզի՝ Սարկոզին կատարեց թուրքերին տված իր խոստումը, թե կանի ամեն ինչ, որպեսզի Հայոց ցեղասպանության ժխտման համար քրեական պատիժ չսահմանվի:



Այդ պատճառով էր նաեւ, որ թուրքերն անակնկալի եկան Ազգային ժողովում եւ Սենատում արձանագրված քվեարկության արդյունքներից: Դրանք հակառակ էին իրենց սպասումներին, ուստիեւ «խաբվածների» պատասխանը «ուրացողին» արտահայտվեց առանձնահատուկ ճաշակի դրսեւորումներով. Սարկոզիի պատկերներով «հիգիենիկ» բնույթի որոշ պիտույքներ եւ ապրանքատեսակներ սկսեցին թողարկել, բայց դա տեղի ունեցավ այն պատճառով, որ Սարկոզին հարկ չհամարեց նրանց բացատրություններ տալ իր նախընտրական մարտավարության վերաբերյալ: Իրականության մեջ չէր էլ կարող...

Հայերին էլ հակառակ խոստումն էր տվել, թե կանի ամեն ինչ... ու ստացվեց այնպես, որ հայերը հաճույք ստացան գործընթացից, թուրքերը՝ արդյունքից: Ու եթե ուզում էր Սարկոզին, որ օրինագիծն օրենք դառնա, ապա առնվազն կարող էր ազդել, որ Ֆրանսիական Սահմանադրական խորհուրդը հարցի քննարկումը կատարի արագացված կարգով (ութնօրյա ժամկետում), ինչի իրավական հնարավորությունն ուներ, որպեսզի բացասական արդյունքի դեպքում ժամանակ ունենար մինչ արձակուրդը հարցը վերադարձնել պառլամենտ: Սարկոզին ձեռնպահ մնաց: Ինչո՞ւ:

Այստեղ տեղին է հիշել մի բնութագրական իրադարձություն. մի քանի տարի առաջ Ֆրանսիան հանրաքվեով մերժեց իր իսկ նախկին նախագահ Վալերի Ժիսկար դե Էստենի (որը Ֆրանսիայի Սահմանադրական խորհրդում է հիմա) հեղինակած Եվրոպայի Սահմանադրությունը: Այն հանրաքվեով մերժվեց նաեւ Նիդեռլանդներում: Մոտիվացիոն գլխավոր փաստարկներից մեկն էլ այն էր, որ ընդունվելիք Սահմանադրությամբ Թուրքիայի անդամակցությունը Եվրամիությանը չէր բացառվում:

Վավերացված հասարակական կարծիքն, ըստ էության, անսքող էր ու չբեւեռացված: Բայց Թուրքիային Եվրոպայում «տեղ չտալու» մոտեցումը, մանավանդ այդ փուլում, հայկական խնդիրների շրջանակին գրեթե չէր առնչվում:

Այլ է իրավիճակը հիմա. նախընտրական տրամաբանությամբ գործող նախագահ-նախագահի թեկնածուի թիմը ուրվագծել է հստակ անելիքներ. ելնելով սեփական թեկնածուի մոտեցումներից, հասարակական մտայնությունների մասին իրենց տեղեկություններից ու պատկերացումներից՝ նրանք ինչ-ինչ ուղերձներ են ձեւակերպել ֆրանսիացի ընտրողի համար՝ նախորդ աշնանից դրանցում ներառելով նաեւ Հայոց ցեղասպանության հարցը: Տվյալ դեպքում առաջնային թիրախային շրջանակը բազմամշակութայնության մերժման դիրքերում գտնվողներն են, որ եթե իրենց համակիրը չդարձան, ձայն են տալու առավել ռադիկալ թեկնածուների:

Ուստիեւ չի կարելի բացառել, որ օրինագծի շուրջ ծայր առած գործընթացը թեկնածու Սարկոզիի թիմի համար նախկինում դրսեւորված միտումները նախընտրական փուլում արդյունավետորեն վերաթարմացնելու լավ առիթ են ու հնարավորություն, ինչից նրանք, անշուշտ, կօգտվեն այնպես, ինչպես փորձելու են առաջ տանել իրենց նախընտրական մյուս մտահղացումները:

Բնական է, որ Սարկոզիի թիմն առաջիկայում ջանալու է ֆրանսահայ համայնքի հիասթափության համար այլ հասցեատեր գտնել, ինչի համար օբյեկտիվ հիմքեր նույնպես կան, քանի որ իմաստ չունի որոշակի քայլերից ձեռնպահ մնալու պատճառով կորցնել հայ եւ հայահամակիր ընտրողների ձայները: Անկախ նրանից, թե իրականության մեջ քանի հայ ընտրող կա Ֆրանսիայում, այսօր գործ ունենք մեկ այլ՝ «հավելյալ գործակցի» գործոնի հետ: Արդեն երրորդ-չորրորդ սերնդով Ֆրանսիայում ապրող ֆրանսահայերը, որոնք էապես ինտեգրված են ֆրանսիական միջավայրին եւ ակտիվ մասնակից են հասարակական կյանքում, նաեւ վայելում են ֆրանսիական հասարակության հարգանքն ու համակրանքը, որոշակի շրջանակներում կարող են իրենցով ինչ-ինչ մոտեցումներ պայմանավորել: Որքան էլ փոքրաթիվ լինեն այս ձայները եւ սակավ՝ նկատելի ազդեցությունները (թեպետ դա վիճելի խնդիր է), այդուհանդերձ, դրանք կորցնելը Սարկոզիի թիմն անիմաստ կհամարի, մանավանդ որ՝ առավելություններ մրցակից-թեկնածուների նկատմամբ դեռեւս առանձնապես չեն նկատվում: Թուրք ընտրողների ձայների կորստյան հետ Սարկոզիի թիմը երեւի թե հաշտվել է, ինչը վկայում են բազմաթիվ ուղղակի եւ անուղղակի իրողություններ, դրանց համար Սենատի քվեարկության հաջորդ օրվանից արդեն միայն մյուս թեկնածուներն են պայքարում:

Անցյալում առիթ եղել է ասելու, որ «Ֆրանսիական վերջին նախաձեռնությունը՝ ցեղասպանությունների մերժումը պատժել Քրեական օրենսգրքով, անշուշտ, հետագայում եւս շարունակություն կունենա, գուցե թե այլ դրսեւորումներով. Հայկական հարցը վերադարձվում է եվրոպական քաղաքականության երկարաժամկետ քննարկումների օրակարգ եւ ժամանակ առ ժամանակ երեւան կհանվի ըստ անհրաժեշտության՝ տարբեր ձեւակերպումներով եւ առիթներով, տարբեր հարթակներում եւ փաթեթներում»: Մի բան ակնհայտ է՝ Սահմանադրական խորհրդի որոշմամբ գործընթացը չի ավարտվում:

Ընդամենը մեկ ամսից պարզ է լինելու՝ Սարկոզին մնո՞ւմ է իշխանության, թե՝ ոչ, իսկ այս էապես կարճ ժամանակահատվածում պայքարը ձայների համար, բնականաբար, թեժանալու է: Տեղի ունենալիքը ցույց կտա Սարկոզիի իրական մտադրությունը՝ Սահմանադրական խորհրդի որոշմանը հետեւելիք գործընթացը կզարգանա՞ նաեւ հանուն իրավական արդյունքի, թե՞ դրանից կփորձեն միայն հաճույք ու ձայներ ստանալ:

ԱՐՄԵՆ ԶԱՔԱՐՅԱՆ

## Բարեգործը մահացել է

Ո՞ր բանկում է պահվում Դիլիջանի եկեղեցու գումարը




Հիմա Հայաստանում մեծ թափով եկեղեցիներ են կառուցվում, որոշ գյուղերում 2 եկեղեցի կա, իսկ 16200 բնակիչ ունեցող Դիլիջան քաղաքում եկեղեցի չի գործում: Հաղարծինի նշանավոր վանական համալիրը Դիլիջանից 14 կմ հեռավորության վրա է գտնվում: Դիլիջան այցելող զբոսաշրջիկները զարմանում են, որ աշխարհում առաջինը քրիստոնեություն ընդունած երկրի առողջարանային եւ ֆինանսական համբավ ունեցող քաղաքում եկեղեցի չկա: Սուրբ տեղը դատարկ չի մնում: «Թուֆենկյան» թանգարանի մաս կազմող շենքերից մեկում գործում է ժամանակավոր եկեղեցի: Դիլիջանցիների վկայությամբ՝ այստեղ հաճախ արարողություններ է կատարում Շավարշ քահանան, այդ սենյակում նաեւ մոմեր են վաճառվում: Մեր տվյալով՝ 6 տարի առաջ՝ 2006 թվականին, արտերկրի բարերարի կողմից Դիլիջանում եկեղեցի կառուցելու համար շուրջ 1 միլիոն դոլարի նվիրատվություն է կատարվել: Բացի այդ, համայնքում ստեղծվել է եկեղեցու կառուցմանն օժանդակող հիմնադրամ՝ նպատակ ունենալով ներգրավել լրացուցիչ ֆինանսներ: Չնայած ձեռնարկած միջոցներին՝ եկեղեցու շինարարությունն այդպես էլ չի սկսվում: Մեր տեղեկություններով՝ եկեղեցու բարեգործը մահացել է, ինչն էլ իր հերթին չի նպաստում եկեղեցու շինարարության մեկնարկին: Հարց է ծագում՝ ո՞ր բանկում է պահվում Դիլիջանի եկեղեցու կառուցման համար նախատեսված գումարը, անցած 6 տարում այն ի՞նչ չափով է աճել: Բացի դիլիջանցիներից, էլ ով է շահագրգիռ, ո՞ր քաղաքը եկեղեցի ունենա:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

## «Հերիք չէ՞ ստեր փչեք ու երգեք»

Իր դեմ ցուցմունք տվող գրեթե բոլոր վկաներին երեկ այսպես էր հակադարձում Գյումրու ՀԱԿ ակտիվիստներից մեկը՝ ազատամարտիկ Ժորա Աթոյանը, որը մի քանի ամիս է՝ դատվում է խարդախություն կատարելու՝ կեղծ փաստաթղթերով զինվորական կենսաթոշակ, բնակարան ձեռք բերելու ու այդպիսով պետությանը 8 մլն 733 հազար 879 դրամի վնաս պատճառելու մեջ:



Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանում դեռ քննվում է այն հարցը, թե Արցախի պատերազմի մասնակից Ժորա Աթոյանը իսկապես կոնտուզիա՞ է ստացել, թե՞ «սիմուլյանտություն» է անում: Երեկ դատարան էին հրավիրվել 8 վկաներ՝ չորսը պետական մեղադրող Հարություն Հարությունյանի, չորսն էլ Ժորա Աթոյանի միջնորդությամբ:

Դատարանն առաջինը լսեց ՕԵԿ ղեկավար Արթուր Բաղդասարյանի ազգականին՝ Արթիկի շրջանի Սպանդարյան գյուղի գյուղապետ Վաղինակ Բաղդասարյանին, որը թեեւ կռվել էր «Մասիսի» գումարտակում, սակայն չէր ճանաչում Ժորա Աթոյանին: Նա պնդում էր, որ իրենց գումարտակում այդպիսի անուն-ազգանունով մարդ չի եղել, որին ի պատասխան՝ ամբաստանյալը տեղից գոռում էր. «Հերիք չէ՞ ստեր փչես ու երգես, եթե մենք իրար չենք հանդիպել Ղարաբաղում, իմ մեղքը ո՞րն է»: Բանը հասավ նրան, որ մեկը մյուսին կռեկտության դասեր էր տալիս:

Սակայն այս վկային դեռ չճանաչարհած՝ մի «կրկես» սկսվեց դատարանում: Պետական մեղադրողի հրավերով դատարան ներկայացավ Նուբարաշենում որպես պահակ աշխատող, բաքվեցի Վյաչեսլավ Ներսիսյանը, ով բացարձակապես հայերեն չէր հասկանում: Վերջինս ասաց, որ ինքը եղել է Հակոբ Կկամարի բարձունքներում, սակայն մարտի դաշտում ֆուտբոլ է խաղացել, հանգիստ անցկացրել: Դատավոր Մարտին Սարոյանի այն հարցին, թե ճանաչո՞ւմ է իրենց գումարտակում եղած գյումրեցիներին, վկան տեղեկացրեց, որ իրենց գումարտակից գյումրեցիները փախել են, որն էլ հարուցեց դատին մասնակցող ՀԱԿ-ակտիվիստների զայրույթը: Վերջիններս մի մարդու պես դուրս եկան դատարանի դահլիճից՝ դատախազին մեղադրելով կռված տղաների անունը վարկաբեկելու, դատը շուռի վերածելու մեջ:

Գյումրու ՀԱԿ համակարգող Աշոտ Զաքարյանը ասաց դատախազին. «Սա հաստատ պատվեր է, էս կարգի մարդկանց բերել եք կռված տղերքին փչացնելու համա՞ր, հա՞»: Մեկ այլ ընդդիմադիր էլ սրտնեղեց, թե գնդակ զարկողին կռված մարդու տեղ բերում, կեղծ ցուցմունքնե՞ր եք կորզում: Ժորա Աթոյանի շահերը պաշտպանող փաստաբան Աննա Դավթյանն էլ այդ վկայից հետաքրքրվեց, թե նա ի՞նչ էր անում կռվի դաշտում՝ ո՞ր գումարտակում է եղել, ո՞ր թվականին: Վկան բորբոքվեց, թե «ինձ նառիժատ է անում»: «Ի՞նչ արի, որ նառիժատ արի, հարցնում եմ, որովհետեւ հրամանագրքի մեջ չկա նրա անուն-ազգանունը որպես պատերազմի մասնակցի»,- մեկնաբանեց փաստաբանը:

Այնուհետ վկայություն տվեցին Ժորա Աթոյանի հրավիրած վկաները, որոնք միաբերան պնդում էին, որ իրենք ականատես են եղել, թե ինչպես է Աթոյանը ականի պայթյունից վիրավորվել Հակոբ Կամարի բարձունքներում: Հետաքրքիրն այն է, որ Ժորա Աթոյանի միջնորդությամբ որպես վկա հրավիրվել էր նաեւ հենասայլակով շարժվող Լյովա Հարությունյանը, որի դեմ նույնպես քրեական գործ է հարուցված փաստաթղթեր կեղծելու ու զինվորական թոշակ ստանալու համար:

ՆՈՒՆԵ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

Առավոտ aravot daily
ՇԱԲԱԹ 03.03.2012

# Պարոն վարչապետ, հիմա ո՞վ խաբեց

## Կամ՝ հայկական գիտության ապագա մոդելը

Այն, ինչ արեցին Երեւանի Ֆիզիկայի ինստիտուտի հետ, կդառնա «օրինակելի մոդել Հայաստանում գիտության մյուս բնագավառները ներկայացնող գիտական կենտրոնների ձեւավորման եւ գիտական գործունեության բարեփոխման համար»: Չակերտների մեջ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի խոսքն է, ասված ամանորյա տոների նախօրյակին՝ անցյալ տարվա դեկտեմբերի 28-ին, Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (նախկին ԵրՖԻ) այցի ժամանակ: Այսինքն՝ այնքան հիացած ու գոհ են իրենց արածով, որ որոշել են մնացած բնագավառների հետ էլ նույն բանն անել: Է, արեք, ի՞նչ ասեմ: Գիտղեկոմի եւ բոլոր գիտական հարցերից ինքնաբացարկ տված Գիտությունների ակադեմիայի ներկայության պայմաններում ամեն ինչ էլ հնարավոր է: Իսկ Ազգային ժողովի գիտության հարցերով զբաղվող հանձնաժողովը չկա՛: Մի անգամ բախտ վիճակվել է հանդիպել հանձնաժողովի նախագահի հետ՝ «Հայելի» ակումբում կազմակերպված ասուլիսում: Տեսարանն այնքան տխուր էր, որ նույնիսկ չգիտես ում խղճալ՝ գիտությա՞նը, նրա կազմակերպիչների՞ն, թե՞ ընդհանրապես բոլորին: Սրանք են այն բոլոր «գիտական» ուղղվածություն ունեցող պետական պաշտոնյաները, որ պետք է գնահատական տային: Չեն տալիս, կարծում եմ մի պատճառով՝ չեն կարող, ունակ չեն: Եվ այս ամենը «պսակվեց» ՀՀ վարչապետի որոշումով (16 փետրվարի 2012, 132-Ա), որով հաստատվեց «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երեւանի Ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անհատական կազմը: Պրոցեսը, որը սկսվեց ծիծաղելի «ԷՈՒՇ-աբանություն»-ից (19 փետրվարի 2009 թվականի N 310-Ն ՀՀ կառավարության որոշում)՝ ավարտվեց երեք տարի երեք օր հետո: Նույն նոտայի վրա՝ անվանի ԷՈՒՇ-աբաններ Ներսես Երիցյանը եւ Սամվել Հարությունյանը դարձան խորհրդի անդամ: Վարչապետի հրամանի մեջ գրված է՝ համաձայնությամբ: Երեւի շատ է համոզել, մինչեւ համաձայնվել են:



Նույնիսկ անզեն աչքով է երեւում, որ խորհուրդը կազմված է երկու տիպի մարդկանցից: Մի խումբը նրանք են, որ ոչ մի կապ չունեն գիտության հետ եւ, կարծում եմ, ԵրՖԻ-ի տեղն էլ չգիտեն: Սրանք երեւի ականավոր բիզնեսմեններ են, որոնք ամբողջ աշխարհում հայտնի հայաստանյան բիզնեսի առանձնահատկությունները պետք է ներարկեն գիտության ասպարեզ: Մյուս խումբը այս վերջին երեք-չորս տարիների գիտության մասին իմ հոդվածների ու ելույթների «հերոսներն» են: Կախարդական փայտիկի շարժումով հավաքվել են մի տեղ: Բացատրում ես, որ «էներգիայի ուղղաձիգ շարժում»-ը եւ նրա հանդեպ «որոշ մոլեկուլների զգայնությունը» (մեջբերում 19 փետրվարի 2009 թվականի N 310-Ն ՀՀ կառավարության որոշումից) գերագույն անհեթեթություն են: Նման բան գրողների ձեռքից պետք է վերցնել նույնիսկ դպրոցի ավարտական վկայականը՝ թողնելով թերի միջնակարգ կրթության տեղեկանք: Բայց սրանց մտցնում են հոգաբարձուների խորհուրդ եւ երեւի շուտով ակադեմիկոս դարձնեն: Բացատրում ես, որ փորձագիտական համակարգը, որը ստեղծել է Գիտղեկոմը, պարզապես օրինականացված «քցման պրոցես» է: Որ փորձագետ ընտրելիս ոչ մի վիճակահանություն չկա, ոչ մի համակարգիչ 12 անգամ նույն ազգանունը չի հանի 1000 հոգանոց ցուցակից: Եվ այն մարդը, որը համաձայնել է դառնալ «փորձագիտական» խեղկատակության մասնակից եւ 12 անգամ «պատվիրած» կարծիք է գրել, նշանակվում է հոգաբարձուների խորհուրդ: ԳՊԿ-ն ստուգելիս հանդիպած «խեղկատակություններից» մեկն էլ «առանց պատերի Հայ-Ֆրանսիական լաբորատորիան» էր, որի «ծննդի եւ գոյության» իմաստը դողացող ձեռքերով փորձում էր բացատրել հեղինակը: Սրա ստեղծումը արտահայտվել էր մի կլորիկ գումար աշխատավարձի ձեւով բաժանելով: Այս «հրաշքը» ստեղծողին նշանակում են խորհրդի անդամ: Հիմա էլ առանց պատերի ինստիտո՞ւտ է ստեղծելու: Արդեն չգիտեմ՝ ո՞ր մեկն ասեմ, կամ իմա՞ստ ունի, եթե պրոֆեսորից 10-15 անգամ շատ աշխատավարձ ստացող Ն. Երիցյանն իր մուտքը գիտություն նշանավորեց նրանով, որ 50 հազար դրամ ստացող գիտնականներին արգելեց երկրորդ տեղից էլ կես դրույք ստանալը: Էկոնոմիկայի իմացության եւ բարոյականության ինչպիսի թռիչք: Եթե անգլերենի իմացությունը կարելի էր շփոթել էկոնոմիկա իմանալու հետ եւ նույնիսկ թղթի վրա ոչ մի հետաքրքիր գաղափար չառաջարկել՝ հիմա էլ կարելի է նույն անգլերենի իմացությունը գիտության տեղ մատուցել: Մեկ է՝ ո՛չ հասկացող կա, ո՛չ գնահատող: Կենտրոնական բանկն էլ նորմալ աշխատավարձը վճարում է: Շնորհավորում եմ՝ գիտության մոդելը ստեղծված է: Ֆիզիկայի ինստիտուտը ամենահզորն էր Հայաստանում: Երեք տարի դիմակայեց: Հաջորդը կհանձնվի շատ արագ՝ «բարեփոխելը» հեշտ կլինի:

ՍԱՍՈՒՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ
Նախկին «Երեւանի Ֆիզիկայի ինստիտուտի» նախկին աշխատակից

### «Իսկ տուն ու մեքենա չե՞ն առել»

«Առավոտը» ահազանգեր էր ստացել Երեւանի պետական մանկավարժական համալսարանի ուսանողներից, որ ռուսաց լեզվի դասախոս Աստղիկ Սաֆարյանը իրենց պարտադրում է գնել իր գիրքը եւ միայն այդ գնով ստուգարք կամ քննություն նշանակում: Ըստ ուսանողների, օրերս էլ պահանջել է, որ ընդմիջման համար 2000-ական դրամ հավաքեն ու սնունդ գնեն իր համար: Կապվեցինք տիկին Սաֆարյանի հետ: Դասախոսը ասաց, որ ուսանողների ասածները իրականությանը չեն համապատասխանում ու սկսեց հեգնել. «Իսկ զգեստ առնել չե՞մ տվել, տուն, մեքենա, ուրիշ բաներ: Ոչ մի բան էլ ճիշտ չէ, եւ ես չեմ իմանում, թե ում հետ եմ խոսում»: Նա ասաց, որ վստահ չէ՝ «Առավոտ» թերթի լրագրողն է խոսում իր հետ, թե մեկ ուրիշը ու առաջարկեց գալ համալսարան: Տիկին Սաֆարյանին այնքան զայրացրին մեր հարցերը, որ նա նույնիսկ ափերից դուրս եկավ ու սկսեց գոռգոռալ լսափողի միջից:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

### Արմավիրը վերանորոգված գրադարան ունի

Արմավիրի քաղաքային գրադարանը վերջերս է վերանորոգվել պետական միջոցներով: Այնտեղ պահվում է 110 737 կտոր գրականություն:

«Եթե ընթերցողին չենք կարողանում տրամադրել նորագույն ժամանակաշրջանի որեւէ գիրք, ապա նա հնարավորություն ունի օգտվել մեր անվճար էլեկտրոնային գրադարանից»,- ասում է գրադարանի տնօրեն Աիդա Ղազարյանը: Նա տեղեկացրեց, որ գրադարանն 2000թ. սկսած՝ համալրվում է նոր գրականությամբ, ստանում նաեւ ուսումնական ձեռնարկներ եւ բառարաններ: Արմավիրի գրադարանը համագործակցում է Երեւանի ազգային գրադարանի, Ավետիք Իսահակյանի եւ Խնկո-Ապոր անվան գրադարանների, ամերիկյան դեսպանատան ռեսուրս կենտրոնի հետ: Վերանորոգումից հետո գրադարանին կից գրախանութ է բացվել: Գրադարանի տնօրենը նշեց, որ ընթերցողների պահանջները մշտապես հաշվի են առնվում, հենց այդ պատճառով էլ ակտիվ գործում է էլեկտրոնային գրադարանը, սակայն նա համամիտ չէ, որ գիրքը այժմ ավելի քիչ է պահանջված. «Տպագիր գրքին փոխարինող չկա, ամեն դեպքում՝ ուզում եմ գիրք կարդալիս գրքի մեջ էջանշան թողնել, զգալ գիրքը»:

ԱՆԻ ՄԿՐՏՉՅԱՆ

# Վրացիները վերաբեմադրեցին «Փսիխոզ 4.48»-ը՝ հատուկ «Արմմոնոյի» համար

Երեկ «Անի» հյուրանոցում կայացած ասուլիսում լրագրողների հետ հանդիպեցին «Արմմոնո» փառատոնի հյուրերից ոմանք:

Վրոցլավի (Լեհաստան) մոնոներկայացումների միջազգային փառատոնի տնօրեն Վեցլավ Գերասը լրագրողներին հայտնեց, որ «Արմմոնո-2013» փառատոնին իրենք նախատեսել են լեհական երեք բեմադրություն, իսկ Վրոցլավի փառատոնի շրջանակներում կցուցադրվեն հայկական ներկայացումներ: Լեհական կողմը մտադիր է առաջիկայում քննարկումներ կազմակերպել իրենց լրատվամիջոցների ներկայությամբ՝ հայկական թատրոնի խնդիրներին եւ զարգացման ուղիներին ծանոթացնելու միտումով: Պարոն Գերասը, ով ամեն տարի պարտադիր այցելում է Հայաստան, «Արմմոնոյի» տնօրեն Մարիաննա Մխիթարյանին նվիրեց թատերական արձանիկ, նաեւ լեհական փառատոնի մասին պատմող գրքեր ու բուկլետներ:

Ասուլիսին ներկա էր նաեւ վրացի պրոդյուսեր Նինո Լաղիաշվիլին, որը ներկայացնում էր Վ. Աբաշիձեի անվան թատրոնը: Նա էլ նշեց, որ երկրորդ անգամ է Հայաստանում, եւ Շեքսպիրյան փառատոնի միջոցով է բացահայտել մեր երկիրը. անցյալ տարի սեպտեմբերին վրացական թատրոնը «Մակբեթ» էր խաղում Հայաստանում: Վ. Աբաշիձեի անվան թատրոնը այսօր հայ հանդիսատեսի դատին կհանձնի «Փսիխոզ 4.48» ներկայացումը՝ ըստ Սառա Քեյնի: Ի դեպ, հատուկ «Արմմոնոյի» համար ներկայացումը վերաբեմադրել են մոնո-ձեւաչափով: Վրացական «Փսիխոզ 4.48»-ում խաղում է 2 դերասանուհի, որոնք, սակայն, բեմում չեն հանդիպելու:




Հիշեցնենք, որ «Արմմոնո» առաջին միջազգային թատերական փառատոնը կայացել է 2003թ. սեպտեմբերի 24-ին: Փառատոնի հիմնադիրն է ՀԹԳՄ նախագահ Հակոբ Ղազանչյանը: 2009-ին փառատոնն ընդլայնել է իր սահմանները եւ անցկացվել Սյունիքում, իսկ 2011-ին՝ նաեւ «Արցախում»: Այս տարի «Արմմոնոն» տոնում է հիմնադրման 10-ամյակը:

Գ. Հ.

# Բարեփոխումները՝ Բոլոնիայի համատեքստում եւ ձեռնարկում

«Էդիտ Պրինտը» հրատարակել է պրոֆեսորներ Ս. Երիցյանի եւ Ա. Ճուղուրյանի հեղինակած «Մասնագիտական կրթության մարտահրավերները. Բոլոնիայից Երեւան» խորագրով ուսումնամեթոդական ձեռնարկը, որտեղ ներկայացվում են բարձրագույն մասնագիտական կրթության բարեփոխումների առանցքային հարցերը Բոլոնիայի գործընթացի համատեքստում եւ դրանց անմիջական անդրադարձը ՀՀ բուհերում: Այն նախատեսված է բուհերի ուսանողների, պրոֆեսորադասախոսական համակազմի, կրթության ոլորտի վարչական աշխատողների, ինչպես նաեւ ընթերցող լայն շրջանակների համար: Հրատարակման արժեքը հատկապես կարեւորվում է 2015թ. Երեւանում կայանալիք Եվրոպայի բարձրագույն կրթական տարածքի նախարարական գագաթաժողովի նախաշեմին: Այս տարվա հունվարի 19-ին Կոպենհագենում տեղի ունեցած Բոլոնիային հետամուտ խմբի նիստին մասնակից 47 երկրների ներկայացուցիչներ մեր երկիրը ընտրեցին 2015թ. Եվրոպայի բարձրագույն կրթական տարածքի նախարարական գագաթաժողովը հյուրընկալող երկիր: Իրադարձությունների նման ընթացքը նախանշում է Բոլոնիայի գործընթացի վերաբերյալ իրազեկում, բազմաբնույթ գնահատականների վերլուծություն եւ, առավել եւս, առկա մարտահրավերների ձեւակերպում, որոնք հեղինակային մոտեցումների ինքնատիպ պրիզմայով մեկնաբանվել են պրոֆեսորներ Երիցյանի եւ Ճուղուրյանի ներկայացրած ուսումնամեթոդական ձեռնարկում:




ՆՈՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

# Ժողովրդավարություն՝ չի նշանակում ժողովրդին վարել

## «Քննադատել՝ հոգեպես տառապել է նշանակում» (Գարեգին Նժդեհ)

Ամանորին շատ խոսվեց ու գրվեց այն մասին, թե աշխարհի տարբեր երկրներում ինչպես են դիմավորում Նոր տարին: Հետաքրքիր են տարբեր ժողովուրդների՝ դարերով պահպանված գեղեցիկ, ինքնատիպ սովորությունները: Իսկ հայկական Ամանորի հերոսների ու ավանդույթների մասին իմանալու համար, թերեւս, հարկ կլինի Ազգագրության ինստիտուտ գնալ, քանի որ առօրյա կյանքում դրանք չեն պահպանվել: Ոչինչ չի պահպանվել: Եվ ահա՝ Ամանորի հետ կապված՝ մենք աշխարհին չենք հետաքրքրում:

Իսկ, առհասարակ, հետաքրքրո՞ւմ ենք մենք աշխարհին: Իհարկե, հետաքրքրում ենք: Միայն՝ ո՛չ մեր կորցրածով, այլ մեր պահպանածով. այն ամենով, ինչ դեռեւս ունենք: Հենց որ էլ ոչինչ չենք ունենա, բոլոր առումներով աշխարհին կհետաքրքրենք այնքան, որքան Ամանորի մեր ծիսակատարություններով:

Իսկ ի՞նչ ունենք մենք:

Մենք ունենք մի երկիր, որի աշխարհագրական դիրքը, թեեւ խնդրահարույց, բայց կարող է եւ շահեկան լինել: Ունենք հարուստ պատմություն, որտեղ այսօր կարող ենք ցանկացած իրավիճակի նախադեպը գտնել՝ փորձ ու դաս առնելու համար: Ունենք մի երկիր, որը պահելու համար իրականում լուծում պահանջող քիչ հարցեր կան: Փոքրիկ ու հրապուրիչ մի երկիր, որտեղ իրենց դրսեւորումն են ստանում տարվա բոլոր եղանակները: Ունենք մեծ ներուժի տեր, տաղանդավոր, ստեղծարար ազգաբնակչություն, որին միայն մի փոքր հնարավորություն տուր, եւ անհնարինը հնարավոր կդարձնի:

Մասնագետների հաշվումներով՝ բարգավաճելու օբյեկտիվ հնարավորության տեսանկյունից՝ Հայաստանը 150 անգամ Թուրքմենստանի նկատմամբ ունի առավելություն, 20-25 անգամ՝ Ռուսաստանի ու Բելառուսի (եթե միայն մենք սիրեինք մեր հայրենիքն այնքան, ինչքան որ սիրում ենք պարծենալ նրանով): Ուրեմն ի՞նչն է մեզ խանգարում օգտագործել մեր ունեցած հնարավորությունը: Ժողովուրդը վստահաբար պնդում է՝ իշխանությունները: Ժողովուրդը լվանում է ձեռքերը եւ իրեն ամենեւին մեղավոր չի համարում երկրում տիրող իրավիճակի համար: Եվ դա միայն մի բան է նշանակում. մեր երկրում բացակայում է ժողովրդավարությունը: Հայաստանի բնակչությունը ոչ մի պարագայում, ոչ մի ձեւաչափով մասնակցություն չունի անձամբ իրեն վերաբերող հարցերի քննությանն ու որոշումների ընդունմանը. ոչ իրական ու օբյեկտիվ հարցումների, ոչ պատգամավորների միջոցով, ոչ էլ որեւէ այլ կերպ: Դրան գումարած՝ ժողովրդավարության նմանակմամբ անցկացված ընտրությունները, եւ խնդրեմ՝ ժողովուրդը լիակատար ազատ է իրավիճակի պատասխանատվությունից: Այն ամբողջությամբ ընկնում է իշխանությունների վրա:

Իրականում, սակայն, երկրի առջեւ դրված անելիքների միայն տասը տոկոսն է պետության բաժինը: Եթե այդ փոքրաթիվ, բայց կարեւոր խնդիրներին պետությունը կարողանա ճիշտ լուծում տալ, մնացած 90 տոկոսը ժողովուրդն, անկասկած, ինքը կլուծի: Արդյունքում, նախ՝ ժողովուրդը միջոցից կվերածվի գործոնի, պահանջատերից՝ պատասխանատուի եւ վերջապես, որ շատ կարեւոր է՝ մեր ժողովուրդը կսովորի որոշում կայացնել: Եթե մի երկրի ժողովուրդ սովոր չէ որոշում կայացնելու, նա, միեւնույն է, մի օր անպայման կկայացնի իր որոշումը՝ պատասխանատուներին պատասխանատվության կանչելով: Հենց դրանից խուսափելու համար է, որ պետությունը ներկայացնում է իրականության դարձերեսը: Ինչ լավ է ամեն ինչ: Չկա խնդիր, չկա եւ այն լուծելու անհրաժեշտություն:



Լավ, վիճակն այսպիսին է: Իսկ ի՞նչ է պետք անել: Առաջին հերթին պետությանը բաժին ընկած հարցերը պետք է հայտարարվեն ու դրվեն օրակարգում: Օրակարգում հարց դնելու նախադեպը մենք արդեն ունենք: Խոսքս կոռուպցիայի մասին է: Բավական եղավ ընդամենը խնդիրը հայտարարել, եւ պարզ դարձավ, որ այն ոչ միայն կա, այլեւ լուծում չի գտնում: Պատճառն այն է, որ վերոնշյալ 10 տոկոս խնդիրները պահանջում են համալիր լուծում:

Նախ՝ օրակարգում պետք է դրվի երկրում անպատժելիության մթնոլորտը արմատից վերացնելու խնդիրը: Օրենքի առաջ բոլորը պետք է հավասար լինեն: Այս մոտեցումը չպետք է կրի հռչակագրային բնույթ: Այդ մասին ժողովուրդը ոչ թե պետք է լսի իշխանավորից կամ կարդա այս կամ այն նախընտրական ծրագրում, այլ դա պետք է լինի պետական մարմինների խիստ որոշակի քայլերի արդյունքում ժողովրդի արած եզրակացությունը: Դրա համար պետք է տալ մարտիմեկյան դեպքերի իրական գնահատականը: Պետք է վերանա արտադրման, ներկրման ու արտահանման մոնոպոլիան: Պետությունը պիտի վերջնականապես որոշի՝ 3 միլիոնի՞ շահը, թե՞ մոնոպոլի շահը: Պետք է խիստ պատասխանատվության ենթարկվեն ժամկետանց դեղեր, հիվանդածին սննդամթերք ներկրողներն ու արտադրողները: Պետք է կանխվի ներքին ցեղասպանությունը, որ ժողովուրդը շատի պետական պաշտոնյաներին: Չէ՞ որ ոչինչ այնպես չի խոցում մարդու հոգին, որքան անարդարությունը:

Հիմա մի կարեւոր խնդրի մասին: Խոսքս հայրենակցական միություններին է վերաբերում:

Մեծ եղեռնից փրկված այն հայերը, որոնք Հայաստան տեղափոխվեցին, իրենց կորցրած բնակավայրերից հոգեբանորեն չկտրվելու, իրենց ինքնության սերմն այս հողին պահ տալու համար այդ բնակավայրերի անուններով կոչեցին Հայաստանում իրենց բաժին հասած գյուղերն ու քաղաքները, ավաններն ու թաղամասերը ու համախմբվեցին Նոր Այնթապի, Մալաթիայի, Արաբկիրի շուրջը: Ստեղծվեցին հայրենակցական միություններ, որոնք փրկօղակ եղան եղեռնը վերապրածների համար: Այդ միությունների շնորհիվ պահպանվեց մեր հայրենակիցների տեղային մշակույթը, խոսվածքը, սովորույթները: Այդպիսով փրկվեց նրանց հուշը, որ նույնն է, թե փրկվեցին այդ հուշը կրողները՝ նրանց մարդկային, քաղաքացիական տեսակը: Այդ հայրենակցական միությունները մեծ ու կարեւոր խնդիր ունեին լուծելու ու փաստորեն միանգամայն դրական դերակատարություն ունեցան:

Այսօր մեզանում գործող հայրենակցական միություններն իրենք են հոգեբանական խնդիրներ առաջացնում եւ այդ միություններին, մեղմ ասած, դժվար է դրական գնահատական տալը: Դրանք շոկոլադապատ վնասակար նյութի պես մի բան են, որ ներքին թունավորում են առաջացնում: Նման հանրային միավորումներն արհեստականորեն ձեւել են մեր փոքրիկ երկրի վրա: Անհրաժեշտ է վերանայել այդ միությունների գոյության ու գործունեության խնդիրը: Պետք է տալ դրանց անհրաժեշտության ապացույցը, նշանակության վերլուծությունը: Այդ միությունները, որոնք բացահայտորեն նպատակամղված են սատարելու այս կամ այն ընտրություններում այս կամ այն քաղաքական ուժին կամ գործչին, աննկատ մասնատում են մեր ժողովրդին: Նրանք ոչ այնքան նպաստում են տվյալ տարածքի, այսպես ասած՝ նույն հող ու ջրի մարդկանց միախմբելուն, նրանց տեղային մշակույթը, կենցաղային տարրերը, պատմությունը պահպանելուն, որքան սահմանազատում են լոռեցիներին վայքեցիներից, սյունիքցիներից եւ այլն: Հայրենակցական միությունները կտրատում են առանց այդ էլ հազար ու մի չափումներով պառակտված մեր ժողովրդին: Նմանատիպ միությունների ստեղծման իրական դրդապատճառը Հայաստանում ձեւավորված «քվե բերողի» ինստիտուտում գերազանց առաջադիմություն ցուցաբերելն է: Որքան մեծ է հայրենակցական միությունը, այնքան մեծ է նրա ղեկավարի՝ որպես «քվե բերողի» քաղաքական կշիռը: Բայց հայրենակցական միությունների ամենասեւ գործը մեզանում այն է, որ նրանք հակակշռում են ազգային միասնության գաղափարին: Այս «տարածքային կտրատվածությանը» գումարվում են բազմաթիվ այլ թիմային, կրոնական տարանջատումներ, որոնցից ազատվելու հրատապության մասին խորհելիս երիցս մարգարեական է հնչում Չարենցի ուղերձը՝ «Ով, հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»: Ի դեպ, հենց այս ուղերձն են որպես իրենց գործունեության բնաբան ընտրում նշված տարանջատիչները:

Մեզանում տարակուսելի միտում ունեն նաեւ շարան-շարան, առանց իրական գաղափարական հենքի ստեղծված կուսակցությունները: Պետականության կայացման համար անհրաժեշտ է նաեւ ձերբազատվել այդ թիմային, կուսակցական փոքրություններից: «Կուսակցամոլը թշնամին է իր ժողովրդի, բարեկամը՝ իր ժողովրդի թշնամիների»: Նժդեհյան այս ոսկե կանոնի լավագույն օրինակը բոլշեւիզմն էր, երբ պետականորեն ազդարարվեց մեծ տեռորի մեկնարկը ու ամբողջ երկիրը վերածվեց տեռորիստական կառույցի: «Կոմսյուզը» կուսակցական խանդավառությամբ իր ժողովրդի սերուցքին կորստյան մատնելու քվոտաներ էր պահանջում Մոսկվայից: Ազգուրաց, մոլեռանդ կուսակցամոլներն այդ տարիներին Խորհրդային միության տարածքում 50 մլն անմեղ զոհ տվեցին՝ շատ ավելի, քան ֆաշիզմը:

Այսօր մեզանում մահվան քվոտային փոխարինելու է եկել «քաղաքակիրթ» քվեն: Ցավոք սրտի, քվե բերողների ձեռքերը հասնում են նաեւ կրթական հաստատություններին՝ տնօրենների միջոցով ծնողական համայնքի վրա ճնշում գործադրելու միտումով:

Քանի որ հիշեցինք Նժդեհին, խոսենք նաեւ մի ցավոտ հարցի մասին: Մեր անկախ երկիրն արդեն քանի տարի է՝ հանդուրժում է Նժդեհի անվան Սպանդարյան հրապարակի գոյությունը: Մեծ ազատասերն իր երազած անկախ հայրենիքում էլ գտնվում է կոմունիստական ճնշման տակ: Նժդեհի անվան հրապարակում Սուրեն Սպանդարյանի արձանի ներկայությունն, ըստ իս, կոմունիստների սրտով էլ չպիտի լինի: Գոնե նրանք ձեռնարկեին նվիրյալ կոմունիստի արձանի օտարումը Նժդեհի անվան հրապարակից: Խոսքը կոմունիստական անցյալը ջնջելու մասին չէ, այլ մեր երկրի գաղափարական փնթիության:

Օրակարգում պետք է դնել արտագաղթի հարցը: Այն պետք է ոչ թե կասեցնել, այլ պետք է չնպաստել դրան: Մեր պետությունն ու կառավարությունը բարձրաձայն ու միանգամայն հստակ պետք է հայտարարեն, թե ուր է գնում Հայաստանը: Ինչպիսին պետք է լինի երկիրը, ինչպիսին պետք է լինի քաղաքացին: Իմ համոզմամբ, անկախ այդ հայտարարության բովանդակությունից, այն մեծ չափով կկանխի արտագաղթը, քանի որ մարդիկ ավելի շատ լքում են Հայաստանը ոչ այն պատճառով, որ համաձայն չեն երկրի դիրքորոշման հետ, այլ այն պատճառով, որ ոչ մի կերպ չեն հասկանում այս երկրի դիրքորոշումը: Այս բոլոր հարցերը օրակարգում դնելն ու դրանց համալիր լուծում տալը բխում է հենց պետական պաշտոնյաների շահերից: Խնդիրը միայն այն չէ, որ իրենք էլ են այս երկրում ապրում, իսկ վատ երկրում լավ ապրելն այնքան էլ հարմար բան չէ: Խնդիրը շատ ավելի պարզունակ է՝ վաղը նորից ընտրություններ են լինելու, ու նրանք վաղը նորից գնալու են ժողովրդի դուռը՝ քվեի հետեւից: Ու կգա, հաստատ կգա մի օր, որ ժողովրդին թերագնահատող իշխանավորին չեն օգնի ոչ հայրենակցական միությունները, ոչ կուսակցությունները:

Այն անօգուտ ջանքերը, որ զուր վատնվում են, կիսով չափ կարելի է ուղղել այս խնդիրներին եւ ունենալ ժողովրդի անկեղծ վստահությունն ու աջակցությունը: Այդ դեպքում ժողովուրդն առանց կողմնակի միջամտությունների կտա իր քվեն իշխանավորին, որն էլ հանգիստ խղճով երկրի կեցության համար անհրաժեշտ խնդիրների 90 տոկոսը կբարդի ժողովրդի վրա, ու ժողովուրդն այդ բեռն ավելի թեթեւ ու սիրով կտանի, քան իր հանապազօրյա հացը մի կերպ փախցնելու բեռը: Դրան անմիջապես կհետեւի երկրում տիրող իրավիճակի նկատմամբ ժողովրդի պատասխանատվությունը: Եվ հենց սա է ժողովրդավարությունը:

Այդ դեպքում, հաստատ, մեր ժողովուրդը կհարգի իր ներկան ու չի պարծենա իր անցյալով: Իր անցյալով պարծենում է չբավարարված ժողովուրդը: Բավարարված ժողովուրդը պարզապես ճանաչում է իր անցյալը՝ իր պատմությունն ու նրա տված դասերը, իր անցյալի ավանդույթները, ծիսակատարություններն ու խորհրդանիշները: Այդպիսի ժողովուրդն աշխարհի ունեցածն իր ձեռքով չի փաթաթում իր վզին ու չի նմանակում աշխարհին:

Եվ միայն այդպիսի ժողովուրդ ունեցող երկիրն է, որ լավ իմաստով հետաքրքրում է աշխարհին:

ՌԱԶՄԻԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Առավոտ aravot daily 03.03.2012

VivaCell MTS
ԷՋԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

# Ռուբեն Հայրապետյան. «Այսօրվանից «Facebook»-ի իմ էջը փակում եմ»

ՀՖՖ նախագահ Ռուբեն Հայրապետյանը հրավիրած ճամուլի ասուլիսում հայտարարեց, որ այսօրվանից Facebook-ի իր էջը փակում է: Անդրադառնալով Facebook-ում տեղ գտած որոշ հրապարակումների վերաբերող հարցին՝ Ռուբեն Հայրապետյանը պատասխանեց. «Հենց այս դահլիճում էր, որ ինձանից պահանջեցիք Facebook-ում էջ բացել, որպեսզի դուք՝ լրագրողներդ, ֆուտբոլասերները եւ Հայաստանի յուրաքանչյուր քաղաքացի ինձ հարց տալու եւ պատասխան ստանալու հնարավորություն ունենա: Ես այդպես էլ արել եմ: Բայց այնպիսի մարդիկ կան, որոնք իմ հասցեին հերյուրանքներ են տարածում՝ գրելով, իբրեւ թե ես միջամտում եմ մարզչի գործերին եւ ինքս եմ որոշում, թե ով պետք է խաղա, ով՝ ոչ: Այդ մարդիկ մինչեւ հիմա չեն հասկանում, որ ես եմ այն մարդը, ով անգամ կարող է մարզիչ հեռացնել աշխատանքից: Բայց մարզիչն ազատ է իր գործողություններում: Նա է որոշում, թե ում պետք է հրավիրել հավաքական, ով պետք է խաղա, ով՝ նստի պահեստայինների նստարանին: Նա է որոշում խաղի տակտիկան: Եվ ոչ ոք չի կարող ասել, թե ես երբեւէ այդ հարցերին խառնվել եմ: Բայց ֆեդերացիայի նախագահը ես եմ: Տարիներ առաջ հավաքականի անհաջող խաղի համար բոլորն ինձ էին մեղադրում: Այո, պատասխանատուն ես եմ: Բայց ինչպե՞ս եք պատկերացնում, որ պատասխան չպետք է տամ վատ ֆուտբոլիստի, մարզչի, թիմում տիրող մթնոլորտի, այն ամենի համար, ինչը կապված է հավաքականի հետ: Եվ այո, որոշ դեպքերում ես պետք է որոշեմ, թե ով իրավունք ունի հավաքականի մարզաշապիկը կրել: Կրկնում եմ. մարզիչն իր գործողություններում ազատ է: Կան ֆուտբոլիստներ, որոնք, իմ կարծիքով, չպետք է հրավիրվեն հավաքական: Բայց եթե մարզիչը պնդում է, հրավիրում ենք: Ու իմ դիրքորոշումը դեր չի կատարում: Բայց եթե ես տեսնեմ, որ մարզիչը համառորեն հրավիրում է այնպիսի ֆուտբոլիստի, որը չի համապատասխանում մեր հավաքականի այսօրվա մարզական պահանջներին, չի համապատասխանում այն փայլուն մթնոլորտին, որ այսօր ստեղծել ենք, իմ հստակ որոշումը կկայացնեմ: Ես թույլ չեմ տա, որ խոտան ֆուտբոլիստը գա հավաքական եւ մարզաշապիկը կրելով՝ վնասի նրա հեղինակությանը: Օրինակ, Սերբիայի հավաքականի հետ խաղում ես չորս ֆուտբոլիստից դժգոհ մնացի: Բայց եթե երեքը անընդհատ պայքարի մեջ էին, բայց այս անգամ նրանց խաղը չստացվեց, ի՞նչ ասեմ Վալտեր Պողոսյանի մասին, երբ առաջին անգամ կրելով հավաքականի մարզաշապիկը՝ նա խուսափում էր պայքարից՝ ոտքն անընդհատ փախցնելով: Երիտասարդ ֆուտբոլիստը նման դեպքում, ինչպես ասում են, ինքն իրեն պետք է պատռեր: Ես նրան պոտենցիալ տաղանդավոր ֆուտբոլիստ եմ համարում: Չմիջամտե՞մ, որպեսզի նա հավաքականի կազմում Կիպրոսում մարզվելով՝ դաշտում պայքարից չխուսափի: Ես երբեւէ ձեր կամ ուրիշի գործերին չեմ միջամտել ու թույլ չեմ տա, որ ուրիշներն էլ սիրողական մակարդակով խառնվեն իմ ու հավաքականի գործերին եւ ֆուտբոլի մեր ներքին խոհանոցին անտեղյակ, սուտ լուրեր տարածելով՝ խանգարեն: Եվ այսօրվա ճամուլի ասուլիսը հրավիրել եմ առաջին հերթին նրա համար, որպեսզի տեղեկացնեմ. շատ լավ էր, որ ձեր խնդրանքով Facebook-ի էջ բացեցի, որպեսզի բոլորի հարցերին պատասխանեմ: Բայց ստացվում է, որ ես այն բացել եմ ինձ վիրավորելու համար, որ ում գլխով ինչ դատարկաբանություն անցնի՝ գրի: Դրա համար էլ հիմա հայտարարում եմ, որ այսօրվանից էջը փակում եմ»:

«Առավոտի» հարցին՝ թվում էր, թե հավաքականի հիմնական կազմը պիտի խաղար Սերբիայի հետ, բայց հակառակը տեղի ունեցավ, Ֆեդերացիայի նախագահը պատասխանեց. «Հարցին լավ կլիներ հավաքականի գլխավոր մարզիչը պատասխաներ: Բայց ասեմ, որ Սերբիայի հետ հանդիպումն ընդամենը ընկերական էր, իսկ Կանադայինը՝ վարկանիշային: Ընկերական հանդիպման իմաստն այն է, որ մարզիչը թե կազմի եւ թե տակտիկական բազմաթիվ փորձարկումներ է անում, նա պետք է հասկանա, թե ինչ խնդիրներ, ֆուտբոլիստներ կան, ապագայի ինչ ռեզերվ պիտի պատրաստ լինի: Ես կիպրոսյան երկու հանդիպումներից ավելի շատ ուրախացա եւ ոգեւորված եմ Սերբիայի հետ խաղով: Բոլորս էլ գիտենք, թե Սերբիան որքան ուժեղ թիմ է: Նրանց հետ խաղացին հիմնականում մեր երիտասարդները: Ես ուրախացա նրանցից մի քանիսի խաղով, որոնք, իմ կարծիքով, ցույց տվեցին, որ ցանկացած պահի պատրաստ են համալրել ազգային հավաքականը: Ինչ վերաբերում է հիմնական կազմով երկրորդ հանդիպմանը, նորամուտը փայլուն նշեց Արազ Օզբիլիսը, հանձին որի՝ մեր ընտրանին ունեցավ եւս մի տաղանդավոր, բարձրակարգ ֆուտբոլիստ: Իսկ դա նշանակում է, որ մեր հավաքականն ապագայում էլ ցանկացած մրցակցի համար լուրջ պրոբլեմ է լինելու»: Հետաքրքրվեցինք նաեւ, թե պարոն Հայրապետյանը մեր ընտրանուն ՖԻՖԱ-ի վարկանիշային ցուցակում ամենաբարձրը ո՞ր տեղում է տեսնում: «Առաջին,- կատակեց նա:- Բայց իրականում հավաքականն ի վիճակի է տեղ զբաղեցնել առաջին 20 հավաքականների շարքում, եւ մոտ ապագայում մենք դրա ականատեսը կլինենք»,- ասաց ՀՖՖ նախագահը:

Ռուբեն Հայրապետյանը հանգամանալից պատասխանեց լրագրողներին հետաքրքրող բոլոր հարցերին, այդ թվում նաեւ՝ քաղաքական:

Ա. ՀԱԿՈԲՅԱՆ



ԺԱՄԱՆՑ

## «Կանաչ դպրոցն» ամփոփվեց

Երեւի Ծաղկաձորի գրողների ստեղծագործական տանը կայացավ Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի (FPWC) կողմից իրականացվող «Կանաչ դպրոց» նախագծի ձմեռային ճամբարի ամփոփիչ/հաշվետու միջոցառումը: Նախագծում ընդգրկված 5 դպրոցների սաները միջոցառման ընթացքում հանդիսատեսին ներկայացրին մեկ շաբաթվա ընթացքում ճամբարում ձեռք բերած գիտելիքները եւ ցուցադրեցին, թե դրանք ինչպես կարելի է կիրառել գործնականում: «Կանաչ դպրոց» նախագիծը ներկայացվեց 5 տարբեր՝ ինֆորմացիոն, թափոնարվեստի, պարի, լուսանկարչության եւ էկոտաղավարում: Ձմեռային ճամբարը «Կանաչ դպրոց»-ը նախագծի հիմնական ծրագրերից մեկն է, որին մասնակցում են նախագծին անդամակցող դպրոցների 30 ամենաակտիվ սաները: Այն մեկնարկել էր փետրվարի 25-ին եւ շարունակվեց մինչեւ մարտի 2-ը: FPWC-ի կողմից իրականացվող «Կանաչ դպրոց» ներկայացնում է համանուն միջազգային ծրագրի հիմնական գաղափարներն ու մոտեցումները: «Կանաչ դպրոց» միջազգային նախագիծը իրականացվում է աշխարհի 43 երկրում: Նախագծում ընդհանուր առմամբ ընդգրկված է 27.000 դպրոցի 6 մլն աշակերտ եւ 400 հազար ուսուցիչ: «Կանաչ դպրոցի» հիմնական նպատակը աշակերտների շրջանում շրջակա միջավայրի եւ մշակութային արժեքների նկատմամբ հոգատար վերաբերմունք եւ պատասխանատվություն սերմանելն է:

Նախագծի փորձնական փուլը հաջողությամբ իրականացվել է 2010-ին՝ Վանաձորի թիվ 10 դպրոցում: Նախագծի այս փուլին մասնակցել են Երեւանի Ջոն Կիրակոսյանի անվան թիվ 20, Ուրծաձորի, Գողթի, Նորատուսի թիվ 2 եւ թիվ 3 միջնակարգ դպրոցների սաները:

Հայաստանում նախագիծն իրականացվում է Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի եւ Հայաստանում Շվեյցարիայի դեսպանության աջակցությամբ: Նախագծի իրականացմանն աջակցել է նաեւ «ՎիվաՍել-ՄՏՍ»-ը:

# «Ասածս տեղ հասցնելու համար պետք է ունենալ սեփական հեռուստատեսություն»

### Տիգրան Նալչաջյանի պատասխանը «գլամուրապաշտներին»

Վերջերս լույս է տեսել STAGE 7 դերասանական ստուդիայի հիմնադիր տնօրեն Տիգրան Նալչաջյանի «GLAMՈՒՌ» գիրքը: Վիպակն այն մասին է, թե ինչպես է մի տղա սիրահարվում դերասանուհու, որին բավականին երկար երկրպագում է, սակայն հանգամանքների բերումով դերասանուհին հայտնվում է պոռնոսկանդալի կիզակետում: Գրքի լույս ընծայման առիթով Տիգրանը ATV հեռուստաալիքի «Պոպ հանրագիտարան» հաղորդման հյուրն էր, հաղորդավարը հարցազրույց է վերցնում նրանից, ապա ասում, որ հաղորդման ժամանակ, որը ցուցադրվելու է եթերով, «GLAMՈՒՌ»-ին լավ կողմով չեն անդրադարձել, Տիգրանն էլ դա համարելով առողջ քննադատության ձեւ՝ չի հակառակվում: Սակայն եթերում լսվում են հետեւյալ խոսքերը՝ «այս տխմարությունը, որն իմ ձեռքում է, գրել է Տիգրան Նալչաջյան անունով մի տղա...», այսինքն՝ հաղորդավարը հեգնանքով մեկնաբանում է գիրքը՝ ընթացքում ցույց տալով հատվածներ հարցազրույցից:

Ըստ հեղինակի՝ իրեն հանիրավի մեղադրում են, սակայն Տ. Նալչաջյանը հավաստիացնում է, որ «GLAMՈՒՌ»-ը հայտնի պատմության հետ որեւէ առնչություն չունի: «Գրքում չկան պոռնոգրաֆիկ նկարների մեկնաբանություններ, պարզապես սարկազմի ձեւով անդրադարձ է արվել հասարակական արձագանքին: Քննադատել եմ այն արատավոր երեւույթները, որոնք տիրում են շոու-բիզնեսում եւ կեղծ գլամուրը ներկայացնող անձանց շրջանակներում, որի ականատեսն ինքս եմ եղել: Այդ պատճառով էլ այն զայրացրել է նմանատիպ մարդկանց, ովքեր կարդալով վիպակը՝ իրենք իրենց են գտնում այնտեղ: Եթե դա չլիներ, կարիք չէր լինի անդրադառնալ եւ վիրավորել հեղինակին: Ես գտնում եմ, որ հեռուստաեթերից աղբ է հոսում հեռուստասերիալների եւ գերտափակ հաղորդումների ձեւով, ինչի արդյունքում էլ արդեն մի քանի տարի հեռուստացույց չեմ նայում, բացի Հայաստանի ֆուտբոլի հավաքականի արտագնա խաղերից»,- ասում է «GLAMՈՒՌ»-ի հեղինակը՝ ավելացնելով, որ նշված հեռուստահաղորդումից հետո ինքը Facebook սոցիալական ցանցի ու որոշ էլեկտրոնային լրատվամիջոցների միջոցով տարածել է իր պատասխանը, որից հետո էլ «Արմնյուզ» հեռուստաալիքն է իրեն հարցազրույցի հրավիրել, ինչը եւս չի գոհացրել Տիգրանին, քանի որ անհաջող է մոնտաժված եղել եւ վարկաբեկիչ՝ իր համար. «Հաղորդավարի խոսքում ամեն ինչ արված էր՝ ինձ վարկաբեկելու եւ իմ գիրքը գռեհիկ, ոչ գրագետ ներկայացնելու համար: Հասկացա, որ այս պարագայում ասածս մեծ լսարանին տեղ հասցնելու համար պետք է ունենալ առնվազն սեփական հեռուստատեսություն»,- ասում է Տիգրանը:



Գրքի հեղինակը նշում է՝ բոլոր նրանք, ովքեր կարդացել են վիպակը՝ համաձայն են իր ասածի հետ, իսկ նրանք, ովքեր դեռ նոր են կարդալու՝ վստահ է, որ կհամաձայնեն. «Մեր երկրում ոչ ոք իր տեղում չէ: Դիլետանտները, որոնք անգրագետ ու խղճուկ պատկերացում ունեն արվեստի, գրականության, գիտության եւ այլ ստեղծագործական ոլորտների մասին, այսօր գտնվում են լսարանների առաջ եւ տափակ դատողություններ անում այս եւ այլ թեմայով: Ցավալի է, որ նմանները անգրագետ են անվանում ինձ ու իմ գրածը՝ այն դեպքում, երբ ես ավարտել եմ Հայաստանում Ֆրանսիական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը՝ լինելով կուրսի լավագույն սովորողներից մեկը, ծառայել եմ զինված ուժերում եւ մասնակցելով մարտական զորավարժության՝ որպես դասակի հրամանատար ստացել եմ «Հայոց բանակի գերազանցիկի» կրծքանշան, կարդացել եմ բազմաթիվ գրքեր, ծանոթ եմ համաշխարհային գրականության լավագույն գործերին:

Իմ գիրքը ընդամենը ժամանցային է, եւ դրանով նպատակ չունեմ ներխուժել գրականության ասպարեզ, այդ պատճառով այս թեման ինձ համար փակված է, չեմ ուզում ժամանակս վատնել այնպիսի մարդկանց վրա, որոնց կյանքի իմաստը «քլաբային» ժամանցներն են, անճոռնի լուսանկարներում տեղ գտնելն ու էժանագին ամսագրերի նյութերը կլանելը: Ինձ քննադատում են մարդիկ, ովքեր նկարում են, թե ինչպես են այս կամ այն «կեղծ գլամուրիստները» հագուստ գնում second-hand-ից: Դա՛ է նրանց սյուժեն: Եվ ավելորդ չէ նշել, որ իրենց հաղորդումներում փառաբանում են այնպիսի գրողների, ովքեր տարածում են հոմոսեքսուալիզմ, ստոր եւ ապազգային արժեքներ, ընտանիքի գաղափարը քանդող մտքեր»,- հավելեց նա:

Ե. ՀԱԿՈԲՅԱՆ